

Սեյրան Զ. Գրիգորյան
Բանաս. գիլ. թեկնածու

ԵՂԻԾԵ ՉԱՐԵՆՑԻ «ՊԱՏԳԱՄՆ» ԻԲՐԵՎ ՄԵԶՈՍՏԻՔՈՍ

«Ո՞վ հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի
մեջ է» ասույթի առեղծվածները

Մուտք

1933 թվականի մայիսի 8-ին Եղիշե Չարենցը գրում է իր առաջին երկու ակրոստիքոսները, որ նվիրում է նորածին դստերը և բանաստեղծության առաջին տողերով հոդում նրա անուն-ազգանունը՝ «ԱՐՓԵՆԻԿ ՉԱՐԵՆՑ»: Անմիջապես հաջորդ օրը՝ մայիսի 9-ին, նա ստեղծում է իր մոտալուս ոլորեգությունը և ապա-գա անկանոն փառքը մարմնավորող «Պատգամ» բանաստեղծությունը:

Ոչ որ, բացի հեղինակից, դեռ չզիշտեր, որ սովորական թվացող այդ չափածո գրվածքի տողերի երկորորդ տառերով կազմված է մի նախադասություն: «Ո՞վ հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»: Եվս ինը օր, և 1933 թ. մայիսի 18-ին Չարենցը գրում է մանկահասակ դստերը նվիրված ևս երկու ակրոստիքոս: Դրանցից մեկին շուտով պատիվ է վիճակվում բացելու «Գիրք ճանապարհի» ժողովածուն: Հենց «Ակրոստիքոս» վերնագրով այն բանաստեղծական-գեղագիտական ձևակերպում է տալիս «Գիրքս նվիրում եմ իմ դուստր ԱՐՓԵՆԻԿ ՉԱՐԵՆՑԻՆ» ընձայականին: Մյուս չորս գործերը տեղ են գտել գրքի «Զանազան բանաստեղծություններ և բարգմանություններ» բաժնում: Ժողովածուի այդ վերջին մասը բացվում է «Պատգամ» բանաստեղծությամբ, իսկ դրանից մոտ տասնինին էջ հետո՝ բաժնի միջնամասում, իրար հետևից զետեղվել են առաջին զավակին ձռնված մյուս երեք ակրոստիքոս-նվիրումները, որոնք նոյն պես վերնագրված են «Ակրոստիքոս»:

1. Ոչ թե ակրոստիքոս, այլ մեզոստիքոս

Իր կենդանության օրոք տպագրված վերջին գրքում Եղիշե Չարենցը դրել է ուղղահայաց տող պարունակող միանգամից **իինգ** բանաստեղծություն՝ չորս բա-

*Յոդվածն ընդունվել է տպագրության 4.09.2012:

Դ (Ռ) պար, թիվ 3 (39) հուլիս-սկզբնամբ, 2012

Վեմ հանահայկական հանդես

ցահայտ ակրոստիքոս և միջին տառերով կազմված մեկ գաղտնազիր: Փաստն ինքնին ուշագրավ է, մանավանդ որ ակրոստիքոսի ձևը, ավելի քան հազար տարի գոյություն ունենալով հայ միջնադարյան պոեզիայում, գրեթե տեղ չի գտել հայ նոր և նորագոյն բանաստեղծության մեջ: Գիտական հետաքրքրությունն էլ ավելի է սրբում, եթե նկատի ենք ունենում, որ «Պատգամում» գործադրված ձևը՝ ուղղահայց տողը կամ բանակապը **ոչ առաջին** տառերով հոդելու հնարանքը, ամբողջ հայ գրականության մեջ գոյություն չունեցած մի ձև:

Որպես գեղարվեստական երևոյթ՝ այն կարող է հասկացվել միայն համաշխարհային բանարվեստի համապատասխան իրողությունների հետ ունեցած հարաբերությունների միջոցով: Տիպարանական, ինչպես և պատմական, գաղափարական, հոգեբանական բազմանիստ խնդիրները համակարգելու և ըստ հնարավորին նորովի մեկնարաններու համար հարկ է նախ վերստին մեջքերել հանրահայտ «Պատգամը»: Երկրորդ տառերի կապակցումը տեսողական առումով ճիշտ վերաբերելու համար բանաստեղծությունը միշտ պետք է տպագրել 1933 թվականին Հայաստանում գործող ուղղագրությամբ.

ՊԱՏԳԱՄ

Նոր լույս ծագեց աշխարհին.

Ո՞վ այդ արևը բերեց:—

Ահա վոսկյա մի արև՝

Ճառագումով իր հրե՝

Այգաբացի պլորպուրն

Նժոյգմների վլու հեց՝

Նոր աշխարհին ու մարդուն

Հոգում ելություն այս արթուն:

Ո՝, ո՞ւմ ձեռորով վառվեց, ո՞ւմ

Հրակարմիր, հրավարս,

Առամանդյա լույսը այս:—

Կրած կյանքի բենի տակ,

Խոր գերության ընդերքում,

Իմաստության մի գետակ

Հիմարության համերգում —

Քանի՛ տարի, քանի՛ դար

Վկայեցիր անհերքում...
—

Ափերին այն խավարտչին,

Ուր հայրենիքն եր մեր հին, —

Չկա՞՞ր արդյոք գետ մի հորդ,

Վոր գերության անհաղորդ՝

Լուր՝ հոսելով դարից-դար՝

Մրության մեջ այն համառ

Այս այգաբացն եր կրում,

Հոգի այգաբացն այս հեռուու՝

Հնուց պահած իր ջրում

Ո՝, **լղձական** այս հեռուն...

Կրած կյանքի բենի տակ՝

Վոգի անկոր, հուր գետակ...

Ահա վառվում ե մեր նոր

Ճառաբանակի լույսը բորբ.

Լվանում ե նա հիմա

Վառվող վոգին մեր անմահ,

Զնադ արևն այդ արի,

Վառված հրով աշխարհի...

Չկա՝ ուրիշ արև ել.

Նա յե միայն, վոր դարեր

Անմար՝ պիտի արևեն՝...

Լույսով վառված սակայն այդ՝

Նժարմներից հիմա մենք

Հիմարությամբ չքափենք

Իմաստությունն այն արար. —

Սեր անցյալի խորամիտ

Ե՞զն այն արդար ու ռամիկ՝

Մեծահանճար ու վարար...¹

1. **Ե.Չարենց,** Գիրը ճանապարհի, Եր., Պետական հրատարակչություն, 1933 թ., էջ 269-270: Սեցերումն արված է գրի առաջին հրատարակության լուսապատճենային վերահրատակությունից (Եր., 1997): Եթե 1934 թ. ժողովածուն փոփոխություններով թույլատրվեց տպագրության, պահպանված մյուս գործերի նման «Պատգամի» էջերը ննացին անփոփոխ (էջ 269-270):

Մոտ ութսուն տարի առաջ ստեղծված «Պատգամ» բանաստեղծությանն առնչվող գրեթե բոլոր հարցերը շատ կամ թիւ, խորությամբ կամ հպանցիկ շոշափվել են անցած տասնամյակների ընթացքում: Դրանց մեծ մասը, սակայն, մինչ օրս մնում է կամ չլուծված (օրինակ՝ գաղտնազիրը բացահայտողի կամ «մատնիչի» անձը), կամ վերջնականապես շխտակեցված (ասույթի արտահայտած գաղափարի բովանդակությունը), կամ էլ գրեթե արձագանքի շարժանացած (հանրահայտ ասույթը պարունակող բանաստեղծության բուն բնագրի որպիսությունը): Դրանց համակարգված ձևով և նորովի անդրադառնալուց առաջ արձանագրենք, որ **ՃԱԼԱՅԻԲ ՄԵԽԱԿԵՏԻՑ** ամենակարևոր հատկանիշը ի սկզբանեւ և ցարդ չի գիտակցվել առհասարակ: «Պատգամում» գործադրված բանաստեղծական հնարաբքը անգիտությունից և անսովորությունից բխած սխալմունքով համարվել է **ակրոստիքու:**

Այդ մասին առաջին անգամ խոսվել է 1936 թ. նոյեմբերի 16-ին՝ Ե. Զարենցի այն հարցաքննության ժամանակ, որ վարել են ԱԽՖԱՀ ՀԽՍՀ-ի գծով ՆԳԺԿ վարչության պետ, պետանվտանգության մայոր Մուղղուսին և նրա տեղակալ, **ՊԱՎ հասուկ** բաժնի պետ, պետանվտանգության կապիտան Գևորգովը: Ծակատագրի հեզնանքով՝ դեռ գրեթե անհայտ այդ բանաստեղծության լեզենը կյանք է մտել մեղմ ասած՝ պաշտոնական պայմաններում, հասուկ ծառայությունների սահմուկեցուցիչ նախաձեռնությամբ: Հարցաքննողներն իրենց հերթական հարցը ձևակերպել են այսպես. «Ձեր «Գիրք ճանապարհի» ժողովածովի «Պատգամ» բանաստեղծության մեջ ակրոստիքոսվ Դուք անց եք կացրել հետևյալ ... լոգուն-գը»²: Այս խոսակցությունը, ի դեպ, նաև «Պատգամ» բանաստեղծության առաջին «վերլուծությունն» է և որպես այդպիսին՝ հետաքրքիր է նաև բովանդակային առումով:

Բայց առայժմ քննենք գրվածքի **ԺԱՆՐԱՅԻԲ ԱՎԱՏԼԿԱՆԵԼՈՒԹՅՈՒՆը**: Նկատենք, որ հեղինակը չի հակադրվում քննիչների տված «ակրոստիքոս» բնորոշմանը և ինքն էլ պատասխանի մեջ օգտագործում է այն: Միայն թե Զարենցը կատարում է անեական թվացող, բայց իրականում կարևորագույն մի ճշտում՝ **«ԵՐԿՐՈՐԴ ՄԱՆԵՐԻ ԱԿՐՈՍՏԻՔՈՍ»**: Ահա նրա պատասխանի սկիզբը. «Ընդունում եմ, որ իմ «Գիրք ճանապարհի»-ում, իրատարակված 1934 թ., «Պատգամ» բանաստեղծության մեջ երկրորդ տառերի ակրոստիքոսվ ես գրել եմ. «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»»³:

Ծակատագրական այս երկխոսությունից մոտ քանի տարի անց Զարենցի արդարացման առիթով ստեղծված հանձնաժողովը, Հր. Քոչարի նախագահությամբ քննելով բռնադատված գրողին ուղղված մեղադրանքը, դարձյալ օգտագործել է ««Պատգամ» ակրոստիքոսը» արտահայտությունը⁴:

Որքան մեզ հայտնի է, «Պատգամը», որ միայն մեկ անգամ էր տպագրվել հեղինակի կենդանության օրոք, Հայաստանում լույս չի տեսել ոչ Զարենցի արգելման շրջանում, ոչ էլ արդարացմանը հաջորդած տարիներին ընդիուպ երկերի ժողովածովի վեցհատորյա գիտական իրատարակությունը: Փոխարենը այդ տասնամյակներին այն բավական հաճախ է տպագրվել սփյուռքում՝ «Գիրք ճա-

² Եղիշե Զարենց, Նորահայտ էցեր, Եր., Երևանի համալս. հրատ., 1996, էջ 371:

³ Նույն տեղում: Տես նաև **Դավիթ Գասպարյան**, Փակ դրմերի գաղտնիքը, Եր., «Ապոլոն» հրատ., 1994, էջ 28-29: Հարցաքննության մեկնաբառնության մեջ այս գրքի հեղինակը նույնպես օգտագործել է «ակրոստիքոս» բառը:

⁴ Տես Եղիշե Զարենց, Նորահայտ էցեր, էջ 613:

նապարիի»-ի վերահրատարակությունների մեջ (թեյրութ՝ 1950 և 1959, Հալեհ՝ 1954 և 1959), առանձին հատընտիրներում, որոշ հեղինակների գրքերում⁵: Մինչև 1968 թվականը, այսինքն՝ մինչև Ե. Զարենցի երկերի երևանյան գիտական հրատարակության չորրորդ հատորի տպագրությունը «Պատգամը» մեկ տասնյակից ավելի հրատարակություններ է ունեցել նաև սփյուռքահայ տարբեր գաղրօշախների պարբերականներում⁶: Վերջիններս հրապարակումները երբեմն ուղեկցել են փոքրիկ պարզաբանումներով, որոնց մեջ, ինչպես և Վահան Նավասարդյանի գրքում, «ակրոստիքոս» բառը բացակայում է և առանձին դեպքերում փոխարինված է «բանալի», «գաղտնիք» և այլ կարգի այլ բառերով:

Եվ ահա 1968 թվականին զգայի ուշացումով (Վերջին երկու հասորները արդեն տպագրվել էին) Երևանում լրիս է տեսնում Զարենցի երկերի ակադեմիական վեցհատորյակի չորրորդ հատորը, որ ի թիվս այլ գործերի, ընդգրկում էր նաև «Գիրը ճանապարիի» ժողովածուն՝ «Պատգամ» բանաստեղծությամբ հանդերձ: Նրա 427-428-րդ էջերում գետեղված այս գրվածքի ճանորդագրության մեջ գրականագիտ Ալմաստ Զաքարյանը բանաստեղծից ու քննիչներից ավելի քան երեք տասնամյակ անց հարություն է տալիս «ակրոստիքոսի» վարկածին. ««Պատգամ» բանաստեղծությունը գրված է ակրոստիքոսի ձևով. երկրորդ տառերից հետևում է՝ «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»»⁷:

Այսպիսով՝ գիտական հրատարակությունն պաշտոնական տեսք է տալիս այն տեսակետին, որը, թեկուզ և հարցաքննության անձուկ մքնողրտում, ընդունել էր նաև Զարենցը: Ըստ այդ տեսակետի՝ արդեն լեզենի վերածված այս բանաստեղծության մեջ գործադրված է, ինչպես Զարենցն է ասում՝ «Երկրորդ տառերի ակրոստիքոս»: Զարմանք է հարուցում, որ այդպես են դատել անգամ հմուտ չարենցագետները և տաղաչափության մասնագետները՝ օգտագործելով նույնիսկ «Երկրորդ տառերի եզրատող» անիմաստ բառակապակցությունը⁸:

Խնդիրն այն է, սակայն, որ ակրոստիքոսը լինում է բանաստեղծության միայն առաջին տառերու: Այն ունի հազարամյակների պատմություն: Տերմինը ծագում է հունարեն «άκρος»-«եզր» և «στίχος»-«ոտանավոր» բառերից: Հետևաբար ակրոստիքոս է համարվում բացառապես առաջին տառերով կապակցված ուղղահայաց տողը: Այն կոչվում է «մեզոստիքոս» (առանձին դեպքերում «մեսոստիքոս»): Այդ բառը նույնպես ծագում է հունարենից՝ «μέσος»-«միջն» և «στίχος»-«ոտանավոր» բառերից:

5 Տես օրինակ, Վահան Նավասարդեան, Զարենց. Յուշեր և խորհրդածութիւններ, Գահիրէ, 1957, Թիւրան, 1962: 2007 թ. Վերահատարակվել է նաև Երևանում:

6 Տես «Զարենց», Գահիրէ, 1939, գիրը Ա, պրակ 1-4, «Կեանը եւ արուեստ», Փարիզ, 1940, թիվ 1, «Հայրենիք» տարեգիրը, Պոսթը, 1947, էջ 168-169, «Հանազգայինի» օրացոյց-տարեգիր-1952, Պեյրութ, 1951, էջ 224-225, «Սայիրի», Պեյրութ, 1952, 21 դեկտեմբերի, «Ալմենիա», Պուենու Այրես, 1967, 12 մայիս, «Յառաջ», Փարիզ, 1967, 22 ապրիլի, «Սփիւրք», Պեյրութ, 1967, 5 նոյեմբերի, «Հայրենիք», Պոսթը, 1968, 13 փետրվարի, «Բագին», Պեյրութ, 1968, թիվ 9:

7 Եղիշե Զարենց, Երկերի ժողովածու, հ.4, Եր., ՀԱՄ ԳԱ հրատ., 1968, էջ 605:

8 «Զարենցի «Պատգամ» բանաստեղծության երկրորդ տառերի եզրատողով (ակրոստիքոս) հայտնի պատվիրանը այսօր շատ է հիշվում»: Տես Դ. Գասպարյան, Կոչ ժողովրդին. Զարենցի «Պատգամ» բանաստեղծությունը, «Ավանգարդ», Եր, 1990, հուլիսի 25, N 82:

Եթե մեջտեղում թաքնված տողը ոչ թե ուղարհայաց է, այլ ունի անկանոն դասավորություն, բանաստեղծությունը (կամ ժանրատեսակը) կոչվում է «լարի-թիթռոս»: Սրա մի տարատեսակ էլ համարվում է այն ձևը, երբ հավելյալ տողը կազմվում է թեքությամբ, այսինքն՝ տողերի անկյունագծով: Այն առավել հաճախ անվանում են «անկյունագծային լարիթիթռոս» («diaconalnyi labirint»):

Վերջապես, պատահում են նաև բանաստեղծություններ, որոնց ուղարհայաց տողը բաղկանում է եզրային, բայց տողավերջի տառերից: Դրանք ել կոչվում են «տեկեստիթռոս» (հունարեն «τέλος»-«հեռու» և «στίχος»-«ուտանավոր» բառերից): Եվ շատ հազվադեպ լինում են նաև դեպքեր, երբ նշված ձևերից երկուար կամ մի քանիս համեմ են զայիս միևնույն բնագրում: Բարդացված այդ ձևը որոշ ուսումնասիրողներ, մասնավորապես ժամանակակից ուսու բանաստեղծ և գրականացեան Իվան Չուլասովը, բնութագրում են որպես «ակրո-կոնստրուկցիա»⁹:

Ելեւով այս համառոտ և հստակ դասակարգումից՝ մենք պետք է որոշակիորեն և վերջնականապես արձանագրենք, որ Եղիշե Չարենցի «Պատգամ» բանաստեղծության մեջ գործադրված է ոչ թե ակրոստիթռոս, այլ մեզոստիթռոս:

Հատուկ պետք է նշել, որ այս բառը բացակայում է ինչպես չարենցագիտության մեջ, այնպես էլ առհասարակ հայերենում: Ուստի խիստ հավանական «օրինականացումից» առաջ հարկ է կատարել եզրաբարի ենթական և գրականագիտական պարզաբանումներ, ինչպես նաև չարենցյան «Պատգամի» իրական ժամանակին պատկանելությունը հիմնավորող փաստարկումներ:

Նախ՝ արձանագրենք, որ «մեզոստիթռոս» բառը միանգամայն համապատասխանում է հայերենի բառակազմության և տառադարձության օրինաչափություններին: Այն կազմված է հայերենին բավական հարազատ դարձած «ակրոստիթռոս»-ի համարանությամբ, իսկ «-ու» վերջածանցով ներդաշնակում է հին հունարենից հայերենին անցած, ինչպես նաև դրանց նմանությամբ կազմված մի ամբողջ շարք բառերի (օվկիանոս, կարողիկոս և այլն): Ի տարրերություն շատ լեզուների՝ հայերենն այդ մասմիկը պահում է և՝ տեղանունների մեջ (Կիպրոս, Հոռոնոս), և՝ հին ու նոր անձնանուններում (Հոմերոս, Հուստինիանոս), և որոշ մասնագիտությունների տեր գիտնականների անվանումներում (մաթեմատիկոս, քիմիկոս): Անսովոր կարող է բավական բառակազմական կադապարի առաջին բաղադրիչը՝ «մեզոն»: Իրականում, սակայն, հունական ««մեսօչ» արմատը հայերենում վաղուց է կատարում բառակազմի դեր: Առանձին բառահոդվածի ձևով այն նշված է նոյնիսկ հայկական հանրագիտարանում: «Մեզոն..., մեզ...(< հուն. մեսօչ – միջին, միջանկյալ), բարդ բառերի սկզբնամաս, որ ցույց է տալիս միջին մեծություն կամ որևէ բանի միջանկյալ դիրքը (օրինակ, մեզոստոմ, մեզոդերմ, մեզոլիք)»¹⁰: Նշվածներից բացի՝ հանրագիտարանի հաշորդող էջերում տեղ են գտել այլ բառահոդվածներ՝ մեզոնետրիա, մեզոններ և այլն: Դրանցից մի քանիսն առկա են նաև արդի հայերենի բացարարական բառարաններում: Ընդ որում ոչ հանրագիտարանում, ոչ բառարաններում չկա որևէ բառ, որ ունենա «մեսօչ» սկզբնաձևը: Եվ բանի որ, ինչպես վերը ակնարկվեց, ուսուական աղբյուրներում բառը երբեմն հանդիպում է նաև ս-ով, հատուկ պետք է նշել, որ հայերենի տառա-

9. И. Чудасов, От акростиха к акроконструкции, <https://sites.google.com/site/poeticskiestranicki/ivan-cudasov-ot-akrosticha-k-akkrokonstrukcii-2>

10. Դայկական սովորական հանրագիտարան, հ.7, Եր., 1981, էջ 377:

դարձության թելադրանքով միանշանակ նախընտրելի է հենց «մեզոստիքոս» ձևը («մեսոստիքոս» ձևը **Մեսոպոտամիա** տեղանվան նման թվում է հնարանություն կամ փոխանցում եվրոպական լեզուներից, որոնցում բառը **սով** է՝ «meso» սկզբանականացնելով):

Գալով մեզոստիքոսի՝ որպես **գրականագիտական տերմինի** բնորոշմանը՝ նշենք, որ այն լայնորեն շրջանառում է հասլավես վերջին տասնամյակների ուսական գրականագիտության մեջ: Ընդ որում հաճախ է նշվում, որ մեզոստիքոսը սակավ հանդիպող տեսակ է: Ուստի պատահական չէ, որ նրանով գրադիմում են առավելապես պոեզիայի նորարարական, անսպոր, անզամ արտառոց ձևերի նկատմամբ առանձնակի հետաքրքրություն տածող մասնագիտները՝ Միխայիլ Գասպարովը¹¹, Սերգեյ Բիրյուկովը¹², Տատյանա Բոնչ-Օսմոլովսկայան¹³, Իվան Չուդասովը¹⁴ և ուրիշներ: Բայց նորագույն այս հետազոտությունների առատությունը չպետք է ստեղծի այն տպագրություննը, թե մեզոստիքոսի պատմատեսական իմաստավորումը նոր է սկզբում: Ընդհակառակը, ժամանակը մի տեսակ «հետ տանելով»՝ գտնում ենք այդ երևույթի ավելի հին դրսնորումներ, որոնց ծավալումն ու խորացումն են վերջին շրջանի ուսումնասիրությունները:

Մեզոստիքոսի համառոտ, բայց ուսանելի բնութագրումը գտնում ենք Ալեքսանդր Կվյատկովսկու «Պոետական բառարանում», որ լույս է տեսել 1966 թվականին: Այս նրա սահմանումը՝ ըստ այդ բառարանի. «Բանաստեղծություն, որի ներսում բառերը լրված են այնպես, որ լրանց առանձին տառերը՝ դասավորված որոշակի կարգով և գրաֆիկորեն ընդգծված, կազմում են բառ, արտահայտություն կամ այն հասցեատիրոց անունը, ում նվիրված է մեզոստիքոսը: Մեսոստիքոսը ամբողջովին վերաբերում է տաղաչափության տեխնիկային, այն ընկալվում է միայն աշխերով կարդալու դեպքում: Մեսոստիքոսները հայտնի էին անտիկ պոեզիայում...»¹⁵: Հին ավանդույթով դեռ «մեզոստիքոս» ձևը օգտագործող բառարանագիրը հասուն նշում է տարատեսակի փաղնջականությունը («հայտնի եր անտիկ պոեզիայում»), բայց, ցավոր, նմուշ չի բերում անտիկ որևէ բանաստեղծից: Բնագրային երկու օրինակ է բերվում, երկուսն էլ՝ 18-րդ դարի ուսական պոեզիայից: Դրանք ուսական մեզոստիքոսի առաջին նմուշներն են և հանդիպում են քիչ հայտնի բանաստեղծների գործերում: Առաջինը Վ. Սորակինի մի բանաստեղծությունն է, որի առաջին տաճ երեք տարրեր բառերի մասերով կազմված են իր երկրի և նրա կայսրության Աննայի անունները.

Выслушай мой вопРОС, СИЯюща в свете:

Кто тя толь украсил, яко розу в лете?

Во истину скажешь, что мудрый владетель,

Глава увенчАННА, чему всяк свидетель¹⁶.

11 **Տե՛ս Գասպար Մ. Լ.**, Русские стихи 1890-х-1925-го годов в комментариях, Москва: Высшая школа, 1993. Լրացնումներով վերահրատարակվել է 2001 և 2004 թթ.: http://philologos.narod.ru/mlgaspar/gasp_rverse.htm

12 **Տե՛ս Բիրյոկов С. Е.**, Поэтический мастеркласс. Урок первый, акrostишиный, 2003. <http://www.topos.ru/article/1746>

13 **Տե՛ս Բոնչ-Օսմոլовская Т.**, Курс лекций по комбинаторной литературе, 7. Последовательности. Буквенные последовательности: абецедарии и акростихи. Мезостихи и телестихи. Фонетические последовательности. Усложненные и множественные акростихи. Лабиринты. http://www.ashtray.ru/main/texts/bonch_course/17a.htm

14 **Տե՛ս Չудасов И. В.**, Акростих в русской поэзии. <http://reading-hall.ru/publication.php?id=693>

15 **Կվյատկովский А. П.**, Поэтический словарь, М., Сов. Энцикл., 1966. с. 154.

16 Նույն տեղում:

Սա օտար փորձից մեր քաղած առաջին մեզոստիքոսն է: Նման բոլոր դեպքերում կամա թե ակամա ծնվում են զուգահեռներ չարենցյան մեզոստիքոսի հետ անկախ այն հաճամանքից՝ հայ քանաստեղծը ծանո՞թ է եղել դրանց, թե՞ ոչ (իրականում չկա որևէ փաստ, որ հաստատի Զարենցի ծանոթությունը ակրոստիքոսի, մեզոստիքոսի կամ նման այլ ձևի որոշակի նմուշի): Բոլոր դիտարկումները փարկածի կամ հավանականության տիրույթում են):

Ձևի առումով նկատելի յուրահատկություն է, որ Վ. Սորակինի մեզոստիքոսը հյուսված է ոչ թե առանձին տառերից, այլ բառամասերից: Սա եական տարրերություն է՝ այն աստիճանի, որ հակառակ Ա. Կվյատկովսկու միանշանակ համոզվածությամբ՝ ժամանակակից մասնագետներից շատերը վերորերյալ նմուշը կհամարեին ոչ թե մեզոստիքոս, այլ լարիրինքոս (տերմինային նման շփոքների առաջիկայում դեռ էլի կրախվենք): Իսկ ահա բովանդակային առումով առկա է ամենայն հավանականությամբ պատահական բացահայտ նմանություն. Վ. Սորակինի օրինակը միակն է մեզ հայտնի օտար բնագրերից, որ, ինչպես և Զարենցի «Պատգամը», մեզոստիքոսի ներսում անփոփում է ազգային բովանդակությամբ ասույթ: Մյուս մեզոստիքոսները, ինչպես շուտով կտեսնենք, մեջտեղի տառերով հոդում են մերք կրոնական որևէ ասույթ (անտիկ և միջնադարյան մեզոստիքոսները, որոնցից հաճախ մնացել են սուկ վկայություններ), մերք գործընկերոց կամ որևէ կենոց անուն (ամերիկյան և ռուսական նոր պոեզիայի նմուշները):

Ա. Կվյատկովսկու բերած երկրորդ օրինակը, որ դարձյալ քաղված է 18-րդ դարի ռուսական պոեզիայից, Էուրյամբ շատ մոտ է անտիկ աշխարհում և միջնադարյան հայ պոեզիայում առավելապես ակրոստիքոսի միջոցով արտահայտված այն ձևին, երբ հեղինակը տառերով կազմում է իր անունը (որոշ մասնագետներ այն հպանցիկորեն կոչում են ակրոստիքոս-ստորագրություն): Ընդգծված յուրահատկությունն այն է միայն, որ այդ քանաստեղծության հեղինակ Կարին Խսոնմինը որոշ բառերի (ի դեպ, նաև տողասկզբի) սկզբնատառերով և կամ վանկերով հոդել է սեփական ազգանունը և կրոնական աստիճանը.

Иисус господь Ему Рабов Оных,
возмет ей МОлбы НАук всех свободных
Иже, Сия зде ТОющие навыкают.
МИлости любве всех благ Научаяют¹⁷.

Գրապատմական զուգահեռի առումով կարևոր է Ա. Կվյատկովսկու հետևյալ պահումը. «19-րդ դարում Ռուսաստանում մեսոստիքոսներ չեն գրել: Միայն 20-րդ դարում՝ դեկադանսի դարաշրջանում, որոշ քանաստեղծներ բողել են մեսոստիքոսներ (օրինակ՝ Վ. Շերշենիշի մեսոստիքոսը՝ հասցեագրված Վ. Բրյուսովին):»¹⁸: Քառահոդված-ակնարկն ավարտվում է մեզոստիքոսի և նման անսվորձների գեղարվեստական արժեքայնությունը միանշանակորեն հերքող մի քառվոր ասույթով, որին վերադառնալու առիթ դեռ կլինի:

Գալով 20-րդ դարասկզբի ռուսական դեկադանսին՝ դա արդեն Զարենցի ժամանակն է թե՝ ժամանակագրորեն, թե՝ գեղարվեստական որոնումների էությամբ: Ուստի «Պատգամի» ժամրային ծագումնարանությունը դիտարկելի է հատկապես այդ շրջանի ռուսական պոետիկայի հետ ունեցած զուգահեռներում:

17 Նույն տեղում:

18 Նույն տեղում, էջ 155:

2.«Պատգամը» և 20-րդ դարասկզբի ռուսական քանաստեղծությունը

Մոտ ուրսունամյա պատմության ընթացքում չարենցյան «Պատգամը» գրեթե չի ենթարկվել հատուկ վերլուծության, մանավանդ՝ ձևային-ժանրային տիպաբանության տեսանկյունից: Գրականագիտական և հուշագրական շարադրանքներում առկա են միայն բույլ ակնարկներ կիրառված եղանակի ինքնատիպության մասին: Առավել որոշակիորեն դա արտահայտվել է հայ հին գրականության մասնագետ Գրիգոր Հակոբյանի հուշերում, որ, անկասկած, ամենից «գրականագիտական» է ստվարածավալ մենուարային չարենցապատումի մեջ և պարունակում է շատ արժեքավոր վկայություններ Զարենցի պոետիկայի, մասնավորապես՝ տաղաշափության մասին: «Պատգամին» առնչվող մի քանի վկայություններին առընթեր հուշագիրը խորհում է, որն այն «յուրօրինակ աքրոստիքոս էր, որպիսին աշխարհում ոչ ոք չի գրել»¹⁹: Այս միտքը ճիշտ կհամարվի, եթե «յուրօրինակ աքրոստիքոս» ասելով՝ հասկանանք մեզոստիքոսը: Բայց, ինչպես արդեն սկսեցինք նկատել, ուրիշները նույնական գրել են **մեջտեղի տառերով** հյուսված տողեր: Այդ իմաստով հնչած միտքը պետք է ընդունել վերապահությամբ: Պնդումն արդարացի է միայն այն մասով, որ «աշխարհում ոչ ոք չի գրել» հենց **երկրորդ տառերով** կապակցված ուղղահայց մեզոստիքոս (համենայն դեպքում, հակառակը վկայող որևէ փաստ առաջմ չի գտնվում):

Հետաքրքիր է, որ անգամ ռուսական բազմահարուստ պոեզիայում, ուր կարծես թե կան «համակցային բանաստեղծության» մողեռնիստական ու ավանդագրադիստական երևակայելի ու աներևակայելի բոլոր տեսակները, հատկապես **երկրորդ տառերով** մեզոստիքոս չկա՝ նախորդ դարի սկզբից մինչև մեր օրերը: Բայց զարմանալին ոչ այնքան դա է, որքան այն, որ Զարենցից **հետո** եկող տասնամյակներին նույն ռուսական պոեզիայում կան, օրինակ, բոլոր տողերի **երրորդ կամ հինգերորդ տառերից** կազմված մեզոստիքոսներ: Ամենից հետաքրքրական նմուշը մեջբերվել է Մ. Գասպարովի Վերոնիշյալ գրքում և հետո նրա միջոցով հայտնվել տպագիր և էլեկտրոնային բազմաթիվ իրապարակումների մեջ:

Զարենցի մահից մեկ տասնամյակ անց՝ 1948 թ., մուսկվացի բանաստեղծ Կոնստանտին Լիպսկերովի լենինգրադցի իր բանաստեղծ գործընկերոջը գրում է հոգեկան զորակցություն արտահայտող սոնետ, որի առաջին տառերով կազմված էր ակրոստիքոս, իսկ երրորդ տառերով՝ մեզոստիքոս: Գաղտնազիրը, որը միաժամանակ **նվիրում** էր և **ասույր**, բաղկացած էր այդ երկուսից (Գասպարովը նման համակցումը կոչում է «**ակրո-մետաստիքոս**»):

Многозычноем пленительным звучат
Летейских берегов туманные дубровы.
О Славим же того, кто, мир увидев новый,
Зо Илом став, не чтит всех канувшего чад.
Испании сады! В них птицы верещат
На Следьем сладостным. Италия! Суровый
Со К выжав из терцин, там с бездны снял покровы
Крест утвердивший муж. Былые не молчат!

19 Գր. Հակոբյան, Ուսուցիչը: Զարենցի հետ. Հուշեր, Եր., «Նախրի» հրատ., 2008, էջ 371:

ОвРаги перейдя, хоть высь была бы в тучах,
МхОм полуоткрытый ключ слов блещущих, певучих,
УдВоив поиски, ищите в тьме густой.
ДлАнь ваша с посохом. Придя к благому краю,
АлКать недолго вам! Ручей коснется, знаю,
РтА вашего... Мы ждем! Где стих ваш золотой?²⁰

Իզուր չե, որ մասնագետները մեզոստիքոսը և նման տեսակները բնորոշում են «հետաքրքրաշարժ տաղաշափություն» գրավիչ անվանումով: Մ. Լոգինսկին շատ արագ պատասխանում է Կ. Լիպսկերովին՝ նրան նվիրելով մեկ ակրոստիքոս և երկու մեզոստիքոս (3-րդ և 5-րդ տառերով) ... նույն բանաստեղծության մեջ.

МнОгОлюбезный друг, волшебник и поэт!

Ах, ТоТ велик в веках, чья лира грянет храбро

ГиМн, Воспевающий акrostихи КонстАбра,

УзЛы Его «К. Л.» и мудрый кабинет!

ЛаЛ и Топаз камней. Пуссен — автопортрет.

ИзОгНутое «пси» тройного канделябра.

По ЗвОнкуму клинку резьба: «Абракадабра»,

С тИБЕтским буддою бок о бок Тинторет.

КаNoПской лирницы уста, как ночь, спокойны.

Ей СнИтся древний плеск, ей снится берег знайный

РеКи, Струящейся, как вечность, где-то там.

ОгOnЬ чуть теплится на самом дне печурки.

В еГо Мерцании загадочным цветам

УпОдОбляются картофельные шкурки²¹.

Արդեն եռակի բարդացված այս «ակրո-դիմետոստիքոսով» (Գասպարով) հելինակը կապակցել է հետևյալ միտքը. «**Մոզ Լիպսկերովին Մ.Լ. Լոգինսկուց պատասխան նամակ**»: Զարմանալի է, քայլ «ակրոկառուցվածքի» (Ի. Չուդասով) միտող այս պատասխանը նույնական է: Ավելի ապահովությունը կարունակությունը ակրո-մեզոստիքոսային երկխոսությունը նախաձեռնած Կ. Լիպսկերովը գրել է և ավելի բարդացված պատասխան, որ չենք մեջբերում տեղի խնայողության նկատառումով: Ասենք միայն, որ արդի ոռուական պոեզիայում կան շատ ավելի բազմազան կառուցվածքներ, նույն բանաստեղծության մեջ ուղղահայաց և անկյունագծային բազմաթիվ սողեր համատեղող գործեր:

Վերադառնալով մեկնակետին՝ հիշենք, սակայն, որ ոչ Զարենցից առաջ, ոչ նրանից հետո չկա **երկրորդ տառերով** ուղղահայաց սող: Օրինաչափությունը հաստատող միայն մեկ բացառություն է նկատվում, այն էլ, որքան էլ անսպասելի թվա, հայ պոեզիայում: «Պատգամից» ավելի քան երեսուն տարի հետո Հովհաննես Շիրազը գրել և «Հուշարձան մայրիկին» (1968) գրքում գետեղել է մի բանաստեղծություն, որի սողերի (բացառությամբ վերջին ուր սողերի) **երկրորդ տառերով** կազմվում է հետևյալ ասույթը. «**Մոնչա, Շիրազ, ազատություն Մասիսի**»:²²

20 **Гаспаров М. Л.**, Русские стихи 1890-х-1925-го годов в комментариях, Москва: Высшая школа, 1993. http://philologos.narod.ru/mlgaspar/gasp_rverse.htm

21 Նույն ստեղում:

22 Տե՛ս Հովհաննես Շիրազ, Երկեր, հ. 4, Եր., «Սովետական գրող» հրատ., 1986, էջ 128:

Սա կարելի է համարել Զարենցի մեզոստիքոսի հետագա ներգործության ցավալիորեն նեղակի մի դեպք, որը, ըստ ամենայնի, հիշեցնում է նախօրինակը: Այն նույնական գաղտնազրկած է²³, ունի պատզամ-աֆորիզմի բնույթ, ազգային-քաղաքական բովանդակություն և այլն: **Այսինքն՝ Շիրազն ուներ ուսուցիչ, որի աներկրայելի ազդեցությամբ էլ գրել է երկրորդ և վերջին մեզոստիքոսը հայ պոեզիայի պատմության մեջ:**

Իսկ ինչպես է ստեղծվել առաջինը, ունեցե՞լ է արդյոք Զարենցը ուսուցիչ և նախատիպ, թե՞ այն հորինել է ինքնարություն ձևով՝ ստեղծագործական ներքին տարերային մղումով: **Տեսականորեն չքացանելով վերջին հավանականությունը՝ հարկ է հասուն լուրզել, ասկայն, որ ոչ հորիզոնական ստոր ոչ թե սկզբի, այլ մեջտեղի տառերի միացումով կազմելու միտումը անծանոր չեն նախաչարենցյան համաշխարհային փորձին, իսկ գրականության տեսության մեջ, թեկուզ և ոչ լայնութեն, շրջանառում էր համապատասխան տերմինը՝ ճիշտ է, դեռևս ս-ով («մեսուսիք»):**

«Պատզամը» ինքնին առեղծվածների կիզակետ է: Եթե նրա ենթատերստային ասելիքը վերլուծելիս պարզվի, օրինակ, որ «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» ասույթը ուղղված է նաև ոուսական գերիշխանության և, հասկանալի է, ոուսերենի տիրապետության դեմ, կգոյանա ևս մեկ հանգուցային առեղծված: Անշուշտ, չարենցյան խոսքարվեստի բազմաթիվ այլ տարրերի նման ակրոստիքոսն ու մեզոստիքոսը նույնպես նրա պուտիկա են բափանցել ոուսերեն գեղարվեստական խոսքի, որոշակիորեն՝ ոուսական սիմվոլիզմի, ակմեիզմի և մոդեռնիստական այլ հոսանքների «հայրերի» ինքնուրույն և բարզմանական չափածո որոնումների ինչ-որ չափով «ուշացած» և չափավոր ներգործությամբ:

Համենայն դեպս, չի կարող շրջանցվել այսպիսի ցնցող փաստ: Հազարամյակների պատմություն ունեցող ակրոստիքոսի ձևը հայ պոեզիայում նույնական ունի ավելի քան մեկ հազարամյակի պատմություն: Այն սկզբնավորվել է 7-րդ դարում որպես այրենական ակրոստիքոս կամ, ինչպես տեսաբաններն են ասում, **«արեցեղարիում»** (Դավթակ Քերքոն և Կոմիտաս Կարողիկոս): Հաջորդ դարում արդեն սկիզբ է առնում հայկական **«ակրոստիքոս-ստորագրությունը»**. հայ առաջին կին բանաստեղծը՝ Սահակուստ Սյունեցին, մի բանաստեղծության տների սկզբնատառերով հողել է իր անունը: Այնուհետև, հատկապես Նարեկացուց սկսած և մինչև 18-րդ դար, մինչև Նադաշ Հովնարան ու Պաղտասար Դպիր, բոլոր դարերի բանաստեղծները գրել են **հարյուրավոր** ակրոստիքոսներ: Դա միջնադարյան հայ պոեզիայում սովորական մի ձև է, որ մասնագետներից շատերը բնորոշում են «ծայրակապ» բառով: Իսկ ահա ամբողջ 19-րդ դարի և 20-րդ դարի առաջին տասնամյակների նախաչարենցյան հայ պոեզիան ասպարեզ է բերում ընդամենը **մեկ** ակրոստիքոս: Դա Վահան Տերյանի «Վեշնալավ Խվանովին» բանաստեղծությունն է.

23 Շիրազի մեզոստիքոսի գաղտնազերծումը և դրա չարենցյան ծագումնաբանության հայտնաբերումը կատարվել է բավական արագ: Արդեն 1969 թ. Բեյրութում լույս տեսնող «Սփիլտը» շաբաթաթերթը (N 15, մայիսի 4) վերահատարակում է Շիրազի բանաստեղծությունը՝ բացահայտելով ծածկագիրը և կցելով լավոնիկ պարզաբնում, որի մեջ մասնավորապես ասված է. «Անմահ Զարենցի «Պատզամը» հիշեցնող թերթուած մը...»

Շիրազ կ'ընթանա Զարենցի ճամբով և ճակատագրով...

Կա՞յ Զարենցը «քակող» նոր օրերու Մուղդուսիմներուն»:

Վարդավառի վարդերը վառ
Երգող երգչիդ երդվում եմ ես.
Չըկար երկրիս նըման պարտեզ –
Եվ նա ավե՞ր, չարին ավա՞ր...
Սրտի երգիչ, դու բոցավառ
Լուսե երգով ասա՛ հրկեզ. –
Վրդյոք «հարյա՞վ» պիտի երգե՞ս
Վառված ու որք երկրիս համար:

Ինչպէս կարկուտն արտն անարատ
Վայր է թափում, այնպէս առատ,
Այնպէս անզուր երկրում իմ որք,
Նայի՞ր՝ թափված քանի՞ կորյուն –
Որքա՞ն, որքա՞ն, որքա՞ն արյուն –
Վերքե՞ր, վարդե՞ր արճոտ ու բորք...²⁴

Այս բանաստեղծությունը ուշադրության արժանի է հենց թեկուզ հայ նոր և նորագույն պոեզիայի՝ Զարենցի ակրոստիքոսներին և «Պատգամին» նախորդած երկարատև շրջանում միակը լինելու հանգամանքով: Առավել էական է, սակայն, որ մինչդեռ հայոց միջնադարի տասնյակ բանաստեղծների հարյուրավոր ակրոստիքոսները, ներառյալ 1930-ական թթ. Զարենցի ուշադրության կենտրոնում գտնվող Նարեկացու և Ծնորհալու մեծաքանակ «ծայրակապերը»²⁵, գրեթե առանց բացառության «արեցեղարիտմներ» և «ստորագրություններ» են (այդպէս է նաև անտիկ աշխարհի այլ գրականություններում), Վահան Տերյանը գրում է «ակրոստիքոս-նվիրում»: Ընդ որում նվիրումը հասցեագրված է մեկ այլ բանաստեղծի, իսկ գաղտնազիրն ամփոփող բանաստեղծությունը ստնետ է: Երկու հատկանիշն էլ խիստ բնորոշ են ժամանակի ոռուական պոեզիային, որի ակնհայտ ազդեցուրյամբ էլ գրված է Տերյանի ակրոստիքոսը:

Այդ շրջանի ոռու բանաստեղծներից ակրոստիքոսներ են գրել Վ. Բրյուսովը, Ի. Աննենսկին, Ի. Սևերյանինը, Ս. Գորոդեցկին, Ն. Գումիլյովը, Մ. Կուզմինը, Ա. Ախմատովան, Ս. Եսենինը և ուրիշներ: Դրանցից շատերը գործընկեր բանաստեղծներին հասցեագրված նվիրումներ են (երբեմն՝ փոխադարձ): Այդ ավանդույթով ավելի ուշ Բ. Պաստոռնակը գրել է Մարինա Ցվետաևայի անունը հոդող երկու ակրոստիքոս: Կրկնակի նվիրում է, բայց միևնույն գրվածքի բնագրում, նաև Նիկոլայ Գումիլյովի մի բանաստեղծությունը, որ որոշ մասնագետներ համարում են առաջին մեզոստիքոսը 20-րդ դարի ոռուական պոեզիայում:

Բանաստեղծության մեջ, որ գրվել է 1912 թվականին, հորիզոնական տողերի տարրեր տառերով հեղինակը կազմել է երկու անկյունագծային տողեր, որոնք հնդում են ոռու համրահայտ գրող, բարգմանիչ Կոռնեյ Չուկովսկու և նրա կնոջ անուն-ազգանունները.

24 Վահան Տերյան, Բանաստեղծություններ, լիակատար ժողովածու, Եր., «Սովետական գրող», 1985, էջ 288:

25 Մանուկ Աբեղյանը «Դայոց իհն գրականության պատմություն» աշխատության մեջ օգտագործում է նաև «Գլխակապ» և «Գլխաբան» եղարարները: Տես Մանուկ Աբեղյան, Երկեր, հ.3, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1968, էջ 561, 582:

КРЕСТ

Корней Иванович Чуковский, вот,
ПОпал я к босоногим дикаряМ
КоРмлю собой их я, и повАр сам –
Увы, Наверно, выйдет стих-уРод.
КорнЕЙ, меня срамите Вы. Иона.
ВернЕЙ нашел приют средь рыбъЯ лона!
А я, увы, к Чуковскому попав,
Добыча я ЧУковского забав.
Ведь кит, УслОжнивши пищеваренье,
ЖелудоК к ТВоему не приравнял
И, вернО, им Совсем не управлял,
Но ты Велик: Какое несваренье
Тебя Сомнит?! Иона будет труп,
Но, Кажется, попал тебе, ЧуковскийЙ,
НА зуб, на твой огромный, страшный зуб,
Я – не Иона, я же не таковский²⁶.

Իրականում հեղինակը գրաֆիկորեն չի լնդգծել անկյունագծային խաչվող տողերը, և բանաստեղծությունը «Խաչ» է կոչվում թերևս ոչ միայն անկյունագծային խաչաձևման պատճառով: Վերջինս գլխատառերով լնդգծել է Ի. Չուկասովն իր մի իրապարակման մեջ, որ Ն. Գումիլյովի կիրառած այս ձևը կոչում է «անկյունագծային ակրոսիքոս» («диагональный акростих»)²⁷: Դա այնքան էլ համոզիչ չէ, որովհետև կատարելապիս «վիզուալ պոեզիայի» օրենքներով ստեղծված այս նմուշում միայն մի քանի եղբային տառեր են մասնակցում անկյունագծային տողերի կազմությանը: Տերմինարանական շփորի մեջ ունաճ այս ձևը կոչում են լարիինքոս, որիիները՝ պարզապիս մեզոստիքոս, որ առավել տրամարանական է, քանի որ հավելյալ տողերը բաղկացած են գերազանցապես միջին տառերից:

Հենց վերջին առումով էլ բերված օրինակը գրավում է մեր ուշադրությունը: Իր ամենանվիրական գաղափարներից մեկը արտահայտելու ծածուկ ձև որոնող Զարենցը, կարդալով Ն. Գումիլյովի բանաստեղծությունը և իմանալով նրա «անմեղ» գաղտնագրի մասին, կարող էր կոսակել, որ թարուն բառերը կամ մտքերը կարեի է արտահայտել հենց մեջտեղի տառերով: Մնում է պարզել, թե հայտնի՞ էր նրան գումիլյովյան «Խաչը»: Ցավոք, Զարենցի գրադարանի ցարուցրիվ վիճակը այս և նման դեպքերում բույլ չի տալիս փաստացի ապացուցել ուղղակի կապի գոյուրյունը, բայց ունենք վարկածն ուժեղացնող բավական ամուր մի փաստ: Զարենցը շատ լավ իմացել և բարձր է զնահատել Ն. Գումիլյովի պոեզիան: Իգոր Պոստովալսկին պատմում է 1935 թվականի աշնանը վերաբերող մոսկվյան մի հանդիպման մասին, որի ընթացքում Զարենցը բնագրային վկայակոչումներով խոսում է Ն. Գումիլյովի գործերից, վերիշում իր հին ընթերցումները և հատված արտասանում: «Մեր քննադատները, –ասում է Զարենցը, –պոեզիայում չեն կարողանում ընտրություն կատարել: Եվ փաստերը չգիտեն: Գումիլյովը նրանց համար ընդամենը իմպերիալիստ է և ոչ ավելին»²⁸:

Նկատելով, որ խոսակցությունը կայանում է «Պատգամի» իրապարակումից

26 И. Чудасов, О некоторых видах строчного акrostиха. <http://art-storona.ru/2007/2/article24.php>

27 Նույն տեղում:

28 Ի. Պոստովալսկի, Եղիշե Զարենցը Երովափայի մասին: Զարենցի հետ. Յուշեր, Եր., «Խայրի», 2008,

շատ չանցած՝ հիշենք նաև, որ Զարենցը նոյն շրջանում թարգմանել է Ն. Գումիլյովի «Վեցերորդ զգացմունք» նոյնպես շատ ինքնատիպ թանաստեղծությունը²⁹:

Ակրոստիքոս-եզրատողի փոխարեն մեջտեղի տառերով կազմված զաղանաբարի ձևին դիմելը Ն. Գումիլյովի փորձարարությունից անմիջապես հետո դրսերում է զտնում Վաղիմ Շերշենիչի և Վալերի Բրյուսովի մի արտառոց թանաստեղծական «Երկխոսության» մեջ: Վ. Շերշենիչը գրում է մի գործ, որի մեջ երկու թեք անկյունագծային տողերով կազմում է «Վալերի Բրյուսովին» նվիրումը, իսկ տողերի մեջ մասի 14-րդ տառերով՝ «հեղինակի կողմից» («օտ ավորա») ուղղահայց տողը: Վերջինս այս լաբիրինթոսում փաստորեն **ուղղահայց մեզոստիքոս** է՝ թերևս առաջինը դարասկզբի ոուսական պոեզիայում (ինչպես հիշում ենք, Ա. Կվյատկովսկին իր բառարանում այս թանաստեղծությունը կոչում է պարզապես «մեզոստիքոս»): Զարենցը, որ շատ լավ գիտեր ոուսական պոեզիան, այս հնարին նոյնպես պետք է որ ծանոթ լիներ: Մանավանդ որ այլոց շարքում լավ գիտեր ու բարձր էր գնահատում Վաղիմ Շերշենիչին: Այդ մասին նա արտահայտվել է մասնավորապես 1922 թ. գրած «Արդի ոուսական պոեզիան» ծավալուն հոդվածում: Այդ ժամանակ Վ. Շերշենիչն արդեն նորաստեղծ իմաժինիզմի խճակի առաջնորդն էր. «Սիմվոլիստների այս ուշացած ասպետները անհարազան են անգամ նէպմաններին, որոնք ունեն իրենց իսկական պոետները, որպիսիք են իմաժինիստներից երկուսը—Մարիենգոֆն ու Շերշենիչից»³⁰:

Առավել ուշագրավ է, որ Վ. Շերշենիչի լաբիրինթոս-մեզոստիքոսին փորձինչ ուշացումով պատասխանել է հասցեատերը՝ Վ. Բրյուսովը (թանաստեղծությունն այդպես էլ կոչվում է՝ «Ուշացած պատասխան Վաղիմ Շերշենիչին»): Ստացվում է արդեն փոխադարձ նվիրում, որովհետև 1913 թ. գրված լաբիրինթոսային այդ ուսանավորում դարձյալ անկյունագծային տողերով Բրյուսովը կապակցել է «Վաղիմ Շերշենիչին» («Վագիմ Շերշենևիչ») ընձայագիրը:

В л е к и с у р о в у ю м е ч т ү,
д А й у т о м л е н н о й р е Ч и,
в а Д и м ь и э т у д а л ь И т у,
д а р И н а с т а р о м ъ В е ч е
с е б е М г н о в е н и Е о г н я,
д ай с м Ү т е с т е Н ы в о л и.
т ы и с к у Ш е н и Е к р е м н я:
з а т м е н и Е о Ш и б к у д н я—
т р о н ь и с к Р о ю д о б о л и!³¹

29 Տե՛ս Եղիշե Զարենց, Նորահայտ էջեր, էջ 299: Այս գրքում աղավաղումներով տպագրվել է Զարենցի թարգմանության կեսը: Ձեռագրի և Ն. Գումիլյովի բնագրի համեմատական վերլուծությամբ ճշտումներ են արվել մեր «Զարենցի անտիպ ժառանակության գնահատման մի քանի հարցեր» հոդվածում: Տե՛ս «Զարենցյան ընթերցումներ», գիրք 7, Եր., Երևանի համապատասխան, 2002, էջ 171-174:

30 Եղիշե Զարենց, Երկրի ժողովածու, հ. 6, Եր., 1967, էջ 62:

31 Բոնչ-Օսմոլովսկая Т., Курс лекций по комбинаторной литературе, 7. Последовательности. Буквенные последовательности: абецедарии и акrostихи. Мезостихи и телестихи. Фонетические последовательности. Усложненные и множественные акrostихи. Лабиринты. http://www.ashtray.ru/main/texts/bonch_course/l7a.htm

Եթե նախորդ երկու հեղինակների փորձերի մասին Զարենցի իրազեկությունը դեռ ինչ-որ չափով թեական է, Վ. Քյուտովի պարագայում կասկածներն աննշան են, քանի որ «սառն ու հմուտ» այդ վարպետի գործերին նա տեղյակ էր խորապես և լատ ամենայնի:

Այսպիսով՝ 1910-ական թթ. ոռուական պեղիայում սկսում են տարածվել **մեջտեղի տառերից** կազմվող բաքնված տողերով բանաստեղծություններ, **լարիրինքոսներ** և **մեզոստիքոսներ**, ընդ որում դրանց նախաձեռնությունը պատկանում է հատկապես Զարենցի նախասիրած մի քանի բանաստեղծներին: Բայց քանի որ մեզ, բնականաբար, հետաքրքրում է «Պատգամի» հղացմանը հանգեցրած ժանրային մշակույթի դաշտը, նկատենք նաև հետևյալ ակնհայտ տարանջանումը. մինչ Զարենցը ակրոստիքոս-եզրատողը փոխարինում էր տողերի ներսում գործող **ուղղահայաց մեզոստիքոսներ**, «արձաք դարի» ոռու բանաստեղծները՝ Ն.Գումիլյովը, Վ. Շերշենիչը և Վ.Քյուտովը, ակնհայտորեն նախընտրում էին **անկյունագծային** ներքին տողը:

Այդ միտումը շատ ցայտում է և իր հերթին բացատրություն է հայցում, որ այս պարագայում ավելորդ կլիներ, եթե սերտորեն չառնչվեր Եղիշե Զարենցի նախասիրություններին: Բանն այն է, որ իիշյալ ոռու բանաստեղծներից շատ առաջ **անկյունագծային** գաղտնազիր տողի հնարքը հորինել է 19-րդ դարի ամերիկացի մեծ բանաստեղծ Էդգար Պոն: Վերջինս Զարենցին ամենից ավելի հոգեհարազարդ բանաստեղծներից էր, ընդ որում անզրսապ հետաքրքրությունը նրա պեղիայի հանդեպ ծնվել ու գնալով ուժգնացել է հենց «Պատգամին» նախորդած տարիներին և դարձյալ ոռուերենի, դարասկզբի ոռու բանաստեղծների, հատկապես Վ.Քյուտովի «օգնությամբ»: Զարենցը անզիերեն չզիտեր, բայց այդ և ուրիշ լեզուներով ստեղծված համաշխարհային բանաստեղծական գանձերին մշտապես հաղորդակցում էր ոռուերենի միջոցով: Իսկ Էդգար Պոն անցյալ դարի առաջին տասնամյակներին ոռու բանաստեղծների կուտքն էր:

3.Էդգար Պոյի «Առեղծվածը» և Եղիշե Զարենցի գաղտնիքը

Պոեզիայի ժամանակակից տեսարանները մեզոստիքոսը համարում են հանելուկային, առեղծվածային ձև: Նոյնը կարելի է ասել հարակից ձևերի՝ լարիրինքոսի, տելեստիքոսի, զանազան զիզզազների և անկյունագծերի, նվազ չափով՝ նաև սովորական ակրոստիքոսի մասին: Խորհրդավորությունը, զաղտմիքի առկայությունը երբեմն արտահայտվում է անզամ վերնագրում³²: Այն մի տեսակ հուշում է ու դրդում կռահելու գաղտնազրի գոյությունը:

Էդգար Պոն ունեցել է բարեկամ ամուսիններ, սակայն, ինչ-որ մի պահի, տիկնոց նկատմամբ առաջացել են առանձնահատուկ զգացումներ, որոնց թելադրով 1847 թ. գրել է «An Enigma» («առեղծված», «հանելուկ», «զաղտնիք») վերնագրով մի սունետ, որի առաջին տողի առաջին, երկրորդ տողի երկրորդ, երրորդ տողի երրորդ և հաջորդական մյուս տառերով գաղտնագրված է այդ տիկնոց լրիվ անունը՝ «Sarah Anna Lewis»: Ահա այդ գաղտնիքը բնագրով.

32 18-րդ դարի վերջի-19-րդ դարասկզբի ոռու բանաստեղծ Յու. Նելենինսկի-Սելեցյու վեցտողանոց փորդիկ բանաստեղծությունը, որի առաջին տառերով կազմվում է «Բարեկամություն» բառը, վերնագրված է «Ակրոստիքոսային հանելուկ» («Загадка акrostическая»):

«Seldom we find,” says Solomon Don Dunce,
 “Half an idea in the profoundest sonnet.
 Through all the flimsy things we see at once
 As easily as through a Naples bonnet-
 Trash of all trash!-how can a lady don it?
 Yet heavier far than your Petrarchan stuff-
 Owl-downy nonsense that the faintest puff
 Twirls into trunk-paper the while you con it.”
 And, veritably, Sol is right enough.
 The general tuckermanities are arrant
 Bubbles-ephemeral and so transparent-
 But this is, now-you may depend upon it-
 Stable, opaque, immortal-all by dint
 Of the dear names that he concealed within ‘t³³.

Այս բանաստեղծությունը նոր շրջանի համաշխարհային պոեզիայի առաջին նմուշն է, որ պարունակում է անկյունագծային միատող: Եվ քանի որ իին աշխարհից և միջնադարից համանման գործեր չեն պահպանվել (կան ընդամենը դրանք հիշատակող կողմնակի վկայություններ), Պոյի բնագիրը ձեռք է բերում գեղարվեստական գյուտի արժեքը: Թե՛ բնագրով, թե՛ զանազան բարգմանություններով այն քաջածանոք էր հատկապես անցյալ դարասկզբի ոուսական բանաստեղծական շրջաններին:

Պոյի ամբողջ գեղագիտության և մասնավորապես «An Enigma»-ի (Վերստին իիշենք անկյունագծերի շարանը) մոգական դաշտում գտնվող ոուս բանաստեղծներից մեկը՝ Վալերի Բրյուսովը, իր կյանքի վերջին տարում բարգմանեց առեղծվածային սոնետը՝ նրբորեն պահպանելով նաև գաղտնագրված նվիրումը.

«Сыскать, — так молвил Соломон Дурак, —

Нам не легко в сонете пол-идеи.

И через пустое видим мы яснее,

Чем рыбин чрез неапольский колпак.

Суета сует! Он не под силу дамам,

И все же, ах! рифм Петрарки тяжелей.

Из филина пух легкий, ветер, взвей, —

И будет он, наверно, тем же самым.»

Наверняка тот Соломон был прав;

Смысл не велик лирических забав, —

Что колпак иль пузыри из мыла!

Но за сонетом у меня есть сила,

Бессмертен мой, как будто темный, стих:

33 Эдгар Аллан По, Стихотворения, М., «Радуга», 1988, с. 170. Սա անգլերեն-ռուսերեն գուցադիր հրատարակություն է, հաջորդ էջում դրված է Ա. Ծչերբակովի բարգմանությունը («Загадочный сонет»): Թեև վերջինն ոնվաճախ պահպանել է գաղտնագիր անկյունագիծը, բայց գերադասում ենք մեջբերել նոյն գրի հավելվածում գետեղված բրյուսովան բարգմանությունը («Энigma») որպես Չարենցի տեսադաշտին նոտ գտնվող սկզբնադրյուր:

Я имя поместил в словах моих³⁴!

Նոյն տարում՝ 1924-ին, արդեն Վ.Քրյուտսվի մահից հետո լույս տեսավ Էդգար Պոյի բանաստեղծությունների ոռուսերեն լիակատար ժողովածուն՝ նրա թարգմանությամբ: Եթե մինչև այդ Չարենցը ծանոթ չէր ամերիկացու պոեզիային (ինչը քիչ հավանական է), դրանից հետո ծանոթությունը և մերձեցումը դառնում են աներկրայելի: Սի քանի տարի անց Պոյի անունը հայտնվում է Չարենցի բնագրում «ARS POETICA»-ի վերջին հատվածում (1928).

Ես վախենում եմ, ինչպես նեկրուման, կես-գիշերային ժամից,
Երբ ելնում է լուսինը դագաղից ու մեռնում է անգամ քամին:
Այդ ժամին, թե արքուն եմ լինում, զգում եմ սարսափով,
Որ ահա կզա Բողյերը, կերևս Էդգար Պուն³⁵:

Այս պահից Չարենցը տառացիորեն հայտնվում է Պոյի պոեզիայի գերության մեջ, որը տևում է մինչև կյանքի վերջը: Բնագրային փաստերից դատելով՝ նրան հնայել է ամերիկացի բանաստեղծի հատկապես մի բանաստեղծություն՝ «Ուլյալումը»: Արդեն 1937 թ. գարնանը Չարենցը հենց այդպես է վերնագրել «Երազների մասին» պոեմի տարրերակներից մեկը, իսկ նոյն ստեղծագործության «Պոեմ անվերնագիր» տարրերակի աշխատանքային նշումներում գրել է, որ նյութը շարադրելու «Ըստ Էդգար Պո-ի» և Ֆրոյլի³⁶: Ի դեպ, Պոյի բանաստեղծությունները լեփ-լեցուն են զանազան երազների ու մղձավանշների պատկերներով, իսկ «Ուլյալում» ոչ պակաս խորհրդավոր գործը ստեղծվել է առեղծվածային «An Enigma»-ի հետ գրեթե միաժամանակ՝ դարձյալ 1847 թ. գրողի վախճանից ընդամենը երկու տարի առաջ: Եվ ահա Չարենցն էլ կյանքի նախավերջին տարում կարծես թե զրում է իր «Ուլյալումը». «Դանքեական սեր» պոեմի համար Motto-բնաբան է ընտրված «Ուլյալում», «Ուլյալում» տողը, իսկ անմիջապես հետո բանաստեղծն իր հերոսուհի Արուս Օսկանյանին գեղարվեստորեն նույնացնում է ամերիկացի բանաստեղծի խորհրդավոր հերոսուհու հետ.

34 Նոյն տեղում, էջ 340-341: Իմ խնդրանքով բանաստեղծ Ներսես Աքարեկյանը անգերենից առաջին անգամ հայերեն թարգմանեց Պոյի տոնետը: Բավկական համարժեք այդ թարգմանության մեջ նույնպես պահպանվել է առեղծվածային անկյունագիրը.

ԱՌԵԴՎԱԾ

Սողոմոն Շիմարն ասում էր. «Փչո՞ց,
Բարոյ է լուրջ իմաստ գտնել ստեռում:
Նեռուն է նույնքան հեշտությամբ դիտվում,
Սևեռվեն եթե գլխարկի միջով:
Պարսպածի մեջ է պարապը հոտուծ:
Բայց հաղթում է մեծ Պետրարկային էլ
Անմիտքն անփոփլած այդ տողերի մեջ:
Ինչպես ընկալեն տիկնայք փափկասուն:
Իմաստնասաց է Սողոմոնն էլի,
Որ սին ու փայլուն և անհուսալի
Պոպչակ է մի այս ստախաղը մեր քնարական,
Անքափանց, անսուս տնեսն իմ, սակայն,
Կլինի անմեռ, անիմաց, կայուն.
Նա մի թամկ անվան սուրբ հետքն է պահում:

(Տպագրվում է առաջին անգամ)

35 Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 139:

36 Տե՛ս Եղիշե Չարենց, Անտիպ և չիավարված Երկեր, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983, էջ 666, 668:

Եվ Էղգար Պոն – Քե՛զ է իր պոեմում անհուն
Կոչել միստիկ անվամբ – Ուլյալում³⁷:

Այսպիսով՝ 1928-1937 թվականները Զարենցի համար անցնում են Էղգար Պոնի «ներկայությամբ»: Այս մթնոլորտում «An Enigma»-ի և «Պատգամի» ընդհանուր թվում են նույնքան բնական, որքան և դրանց բացահայտ յուրահատկությունները:

1. Ճիշտ է, որ Պոն դիմում է սիրելի կնոջը, իսկ Զարենցը՝ սիրելի ժողովրդին, բայց երկուսն ել գաղտնագրում են, որովհետև բացահայտորեն չեն կարող ասել մտածածը:

2. Պոն ծածկագրով գրում է հասցեատիրոջ սոսկ անունը, իսկ Զարենցը՝ հասցեատիրոջն ուղղված մի ամբողջ նախադասություն-աֆորիզմ, բայց երկուսն ել բարցնում են ոչ թե առաջին, այլ մեջտեղի տառերի միջոցով (հասկանալի բացառություն է միայն «Սառա Աննա Լյուի» անվան առաջին տառը):

3. Գաղտնագիր տողը Պոյի բանաստեղծության մեջ կազմում է անկյունագիծ, իսկ Զարենցի բանաստեղծության մեջ՝ ուղղահայց տող, բայց երկուսն ել տանջվում են գաղտնագրման փաստը կորսայան չմատնելու մարմաջով: Պոն դա արտահայտել է վերնագրով և շարադրանքով, ըստ որի՝ իսկապես անիմաստ է պոետական զվարճանքը, բայց իր ստեղծությունը ուժ ունի, որովհետև, ինչպես ասվում է վերջին տողերում՝ «Անքափանց, անսուտ ստեղծուն իմ, սակայն, Կինի անմեռ, անիմաց, կայուն, Նա մի բանկ անվան սուրբ հետքն է պահում» (Ն.Աքարեկյանի բարգմանությամբ):

Զարենցը նույնապես բարցրած մտքի գոյությունը հասկացրել է վերնագրով և անհամնատ անորոշ ձևով՝ նաև շարադրանքով, որի մեջ երկար խոսում է ինաստությունը չկորցնելու մասին:

4. Մեզոստիքոսի հայտնությունը: «Պատգամը» և ակրոստիքոսի ազգային ու համաշխարհային փորձը

Նույն 1920-ական թթ. երկրորդ կեսին, այսինքն՝ «Պատգամի» հղացմանն անմիջականորեն նախորդած տարիներին, ոչ եզրային գաղտնաստողի ձևը սկսում է իմբնավորապես գիտակցվել նաև պոեզիայի տեսության մեջ: 1926 թ. Լենինգրադում լույս է տեսանում երրեննի բանաստեղծ, տաղաչափության հմուտ մասնագետ Նիկոլայ Շուլգովսկու «Հետաքրքրաշարժ տաղաչափություն» («Занимательное стихосложение») գիրքը: Շուլգովը՝ 1929-ին, այն լրացումներով վերահրատարակվում է «Կիրառական տաղաչափություն» վերնագրով: Բանաստեղծական այլևայլ ինքնատիպ տեսակների շարքում Ն. Շուլգովսկին տալիս է նաև մեզոստիքոսի սահմանումը: «Վերջապես, բարցրած բառը կարելի է տեղադրել նաև ոտանակորի մեջտեղում: Այդ ձևը կրում է Մեզոստիքոս անունը»³⁸: Իհարկե, անմիջապես հետո ասվում է, թե այն համարվի՞ն է «ակրոստիքոսի տարատեսակ», մի կարծիք, որ ճիշտ է միայն հարաբերականորեն և այդքանով իսկ զնալով ավելի հավաքաղեալ է հանդիպում մեր ժամանակներում: Վկայակոչելով բառի հու-

37 Եղիշե Զարենց, Վերջին խոսք, Եր., «Դայագիտակ», 2007, էջ 169:

38 Շուլցովսկի Հ. Հ., Прикладное стихосложение / Изд. второе, исправленное и дополненное. - Ленинград: Прибой, 1929, с. 19-20. Այս գիրքը 2008 թ. Սոսկայում վերահրատարակվել է «Занимательное стихосложение» վերնագրով:

նական ծագումը՝ Ն. Շուլզովսկին մեկնարանում է, որ «անհրաժեշտ բառը կազմող տառերը տեղադրված են ուսանավորի մեջտեղում: Այդ տառերը պետք է դասավորել մեկը մյուսի վրա և դրան հասնելու համար համապատասխան ձևով պետք է տեղադրել այն բառերը, որոնք պարունակում են տվյալ տառերը»³⁹:

Իսկ կա՞ արդյոք մեզոստիքոսի օրինակ ժամանակակից գրականության մեջ: Հետաքրքիր է, որ դեռևս 1914 թ.՝ ուսական մոդեռնիզմի ծաղկման օրերին, նոյն հեղինակը հրատարակել է պոեզիայի տեսությանը վերաբերող մեկ այլ աշխատություն, որում մեզոստիքոսի բնորոշումն առաջին անգամ տալուց հետո օրինակ չի բերում նետելով այսպիսի բազմանշանակ միտք. «Մեսոստիքոսի ձևը խիստ հազվադեպ է»⁴⁰: Իսկ արդեն 1929-ին բերում է նոր ստեղծված բարձ նմուշ, որը զարմանալիորեն կոչվում է հենց «Մեսոստիքոս» և որի հեղինակն է 1920-1930-ականների հայտնի բանաստեղծ, հետազյում բռնադատված Ալեքսանդր Տուֆանովը: Այն էապես շարունակում է ուսու միմվոլխստերի ակրոստիքոսների և անկյունազների՝ զննե արտաքնապես «ալքոմային լիրիկա» հիշեցնող նվիրումների ձևը և բայ այդ յուրաքանչյուր տողի մեկական տառով կազմված ուղղահայցով ամբողջացնում է «Հիշտակ Նատաշային» արտահայտությունը: Բայց քանի որ տողերից վերցված են խառը հաջորդականությամբ տառեր, գրականագետը, հավանաբար հետևելով բանաստեղծ՝ հեղինակին, տողերը ձախից աջ տեղաշարժում է այնպես, որ տողը գծանկարչորեն ընդգծվի որպես ուղղահայց:

Месостих

Когда туманН как дым ползет к ущелью,
азалий ДафнаА ищет по горам,
венок плететТ... а я несусь с метелью
Сквозь льды, без солнцаА, выше по скалам,
туда, где тиШь царит в пустыне синей...
Там в глубинеЕ зеркальной паутиной
Я вечно скованН: с Дафной я не сам.
Когда онаА волной своей прибойной
бьет снизу в насыпь млечного пути,
я как звездаА и как ручей разбройный
лечу к ущельюМ — вижу, не найти;
ищу огняЯ, в который мир закован...
опять, опятьТь землей я зачарован.
Чтоб снова в натишье звездную уйти⁴¹.

Ուշադրություն դարձնենք այն հանգամանքին, որ այս երկու գործողությունները՝ մեզոստիքոսի գիտական սահմանումը և հենց այդ վերնագրով բանաստեղծության միաժամանակյա հրապարակումը, կատարվել են Զարենցի «Պատգամ»-ի երկնումից ընդամենը չորս տարի առաջ՝ 1929 թվականին Լենինգրադում: Իսկ 1929 թ. աշնան Զարենցը Լենինգրադում էր և հետազոտում էր այդ նշանավոր քաղաքի պատմական, մշակութային, գրական հարստությունը: Բացառված

39 Նույն տեղում, էջ 20:

40 Шульговский Н. Н. Теория и практика поэтического творчества. Технические начала стихосложения. СПб, Издание т-ва М. Вольф, 1914 г., с. 506.

41 Шульговский Н. Н., Прикладное стихосложение, с. 20.

չէ, ավելին՝ խիստ հավանական է, որ հենց այդտեղ էլ նա կարդացել է Ն. Շոլգովսկու գիրքը և մտապահել: Չանզի «Պատգամի» կարգի գործերը հենց այնպես, պատահականորեն չեն ստեղծվում⁴²:

Գիտական փարկածի կարգով առաջարկելով վերաբննել «Պատգամ» բանաստեղծության ծագումնաբանությունն ու ժամանակակից պատկանելությունը՝ մենք հակած չենք նեղացնելու նշանավոր այդ կորողի գրամշակութային տարողությունը: Ընդհակառակը, երևույթը համաշխարհային գրական մտքի համապատկերում դիտարկելու ձգուումը թույլ է տալիս նկատել շատ էական բացող գծեր հենց ակրոստիքոսի պատմության և տեսության սահմաններում: Որքան էլ «Պատգամը» սովորական ակրոստիքոս չէ, գաղտնագիր տողի ստեղծման լճթացրում նրանում արտահայտվել են իին ու նոր, հանրահայտ և բացառիկ ակրոստիքոսների գեղագիտական հատկանիշները:

Նախ՝ դարձյալ իիշենք, որ «Պատգամը» գեղարվեստորեն «շրջապատված է» Զարենցի՝ դատերը նվիրված չորս ակրոստիքոսներով: Դրանք հետաքրքրական են և՝ ինքնին, և՝ մեզոստիքոսի ճիշտ ընկալմանը բերող նպաստով: Ակրոստիքոսները, որոնք կազմում են նույն եզրատողը՝ «ԱՐՓԵՆԻԿ ՉԱՐԵՆՑ», բնույթով անվանական ակրոստիքոսներ են կամ, ինչպես տեսաբաններն են ասում՝ նուոգրամներ: Այս հասարակ փաստի մեջ անգամ բեկված է մի մեծ օրինաչափություն, քանզի ակրոստիքոսի պատմության մեջ առանձնացնում են երեք հիմնական տեսակ.

1.ակրոստիքոս-բանալի, որի առաջին տառերով շաղկապված եզրատողը անթաքրոյց ձևով արտահայտում է բանաստեղծության հիմնական գաղափարը,

2.ակրոստիքոս-նվիրում, որի հասցեատերը կարող է լինել ի սկզբանե հայտնի կամ նրբորեն բարցված,

3.ակրոստիքոս-ծածկագիր, որի պարունակած բառը կամ ասույթը հասուկ բացցվում է գրաբնչական, քաղաքական կամ բարոյական որևէ նկատառումով:

Առանձին տեսակ է համարվում այբբենական ակրոստիքոսը («արեցելարիում»), որի տողերի, տների կամ բառերի սկզբնատառերը հաջորդաբար կազմում են տվյալ լեզվի այբուբենն ամբողջությամբ:

Իսկ ահա **տեկստիքոսը, մեզոստիքոսը և լարիքնիքոսը**, ներքին զանազան ճյուղավորումներով հանդերձ, սակավադեպ զարտուիլ ձևեր են, որոնց մասին անհրաժեշտ հանգամանալիությամբ արդեն խոսել ենք:

Արիենիկին նվիրված չորս գործերը ակրոստիքոս-նվիրումներ են, որոնք, ինչպես և «Պատգամը», ամփոփում են ժամանի պատմության աներևույթը ու բացահայտ նստվածքները, բայց նաև՝ ունեն ակնհայտ ինքնատիպ գծեր: Որ դրանք մարմնավորում են **անուն**, ներքուստ հեռավոր հաղորդակցության մեջ է այն իրողության հետ, որ աշխարհի առաջին ակրոստիքոսները հենց անուններ էին կապակցում: Մասնագետների մեծ մասը հանգված է, որ ակրոստիքոսի հիմնադիրը իին հոյն բանաստեղծ Էպիքարմոսն է (մ.թ.ա. 5-րդ դար), որը իր գործերի հեղինակային պատկանելությունը արտահայտել է սեփական անունը ակրոստիքոսի

42 Ի դեպ, նույն 1929 թ. դարձյալ լենինգրադից, ավելի ուշ՝ հետապնդան ենթարկված բանաստեղծ Արտեմի Ալվինզը գրել է սակավադեպ ձևով մի բանաստեղծություն-ակրոստելեստիքոս, որի տողերի առաջին և վերջին տառերով կազմել է «Կեցցե Յուրի Նիկանորովիչ Վերխովսկին» նվիրումը: Նվազ հետաքրքրի չէ, որ նոյն հեղինակը «Պատգամնից» ընդամենը երկու տարի առաջ իր խմական անուազգանունը լույս է ընծայել տաղաչափահիտական մեկ այլ աշխատություն: Տե՛ս Սմիրնով Ա.Ա., Վեճում և առաջարկում 1929 թ. պատգամը և այլն, մաս 1, էջ 10-11:

ձեռվ գրելով: Նույնը արել է հոռմեացի բանաստեղծ Էննիոսը, որն իր չափած գործերը պիտակել է «Հորիմել է Էննիոսը» ակրոտողով: Սա է, որ մասնագետները համարում են առաջին ստորագրությունը գրարվեստի պատմության մեջ:

Ակրոստիքոս-ստորագրությունը բազում դրսնորումներ ունի հայ միջնադարյան պոեզիայում, որ «Գիրք ճանապարհին» ձևավորած ամենից հզոր մշակութային ավագաններից է: **Սահակդուխտ Սյունեցու** խիստ տպավորիչ, բայց հպանցիկ փորձից հետո իրենց գործերը ակրոստիքոսով են կմքել նախ՝ **Նարեկացին**, իսկ ավելի հաճախ՝ **Շնորհալին**: Գրիգոր Նարեկացու «Քառասնիցն» տաղը տողերի առաջին տառերով հորում է «ԳՐԻԳՈՐԻ Է ԵՐԳՍ ԱՅՍ» նախադասությունը⁴³, «ԳՐԻԳՈՐԻ ԵՐԳ» բառակապակցությունն են կազմում նրա գանձերը, ընդ որում հենց ակրոստիքոսի առաջին տառը կազմելու համար է, որ բանաստեղծը դրանք սկսում է «զանձ» բառով և այդպիսով հիմնադրում գրական նոր ժանր (փասոններ՝ ակրոստիքոսը կատարում է ժանրակազմիչ դեր):⁴⁴

Ավելի հաճախակի ու բազմաձև են **Ներսես Շնորհալու** կազմած ակրոստիքոսները: «Աքեցեղարիում» տարբեր ձևերից ու մի շարք նվիրումներից բացի, հատկապես տաղերում և գանձերում տեղ են գտել «**Ներսիսի երգ**», «**Ներսեսի է**», «**Ներսեսի է այս բանս**» և այլ ստորագրությունները⁴⁵: Միջնադարի երկու հսկաների այս նախասիրությունները՝ միաձուլված հեղինակային իրավունքի միջնադարյան ըմբռնան և անտիկ-քրիստոնեական ավանդույթի գործոններին, պատճառ են դառնում, որ հեղինակի անունն ամփոփող ծայրակապ-ակրոստիքոսներ կազմեն հաջորդ դարերի բազմաթիվ հայ բանաստեղծներ՝ **Խաչատոր Տարոնեցին**, **Հովհաննես Թղկուրանցին**, **Գրիգորիս Աղքամարցին**, **Գրիգոր Խարքեցի Շերենցը**, **Նաղաշ Հովհաննը**, **Պաղտասար Դպիրը** և ուրիշներ:

Անունը՝ ակրոստիքոսի մեջ. ընդհանուր և ազգային այս ավանդույթն է վերաբերնանում դաստերը նվիրված շարենցյան ակրոստիքոսներում: Բայց նախկինում գորեք միշտ գրանցված էր **հեղինակի** անունը, իսկ Զարենցի գործերում հեղինակի անունը առկա է այնքանով, որքանով այն նաև հասցեատիրոջ՝ փոքրիկ Արփենիկի ազգանունն է: Այս հանգույցում Զարենցը անտիկ ավանդույթին պատվատում է ռուսական նոր բանաստեղծության ակրոստիքոսային ավանդույթը: Վերջինիս մեջ դարձյալ անվերապահորնեն գերակշռում են անունները, բայց դրանք կամ գործընկերների, կամ բարեկամուիհների անուններ են:

Համաշխարհային գրականության մեջ չի երևում որևէ այլ դեպք, որ բանաստեղծը ակրոստիքոսը նվիրած լինի իր երեխային: **Զարենցը միակ հեղինակն է**, որն ակրոստիքոսներ է նվիրել իր երեխային, ընդ որում՝ դա արել է չորս անգամ:

Ավելին՝ չմոռանանք, որ Զարենցը ակրոստիքոսները գրել է ոչ թե Արփենիկի ալբոնում, այլ իր կյանքի ճանապարհն իմաստավորությունը գործում, ընդ որում դրանցից մեկը դրել է գրի ճակատին: Մեջքերենք այն դարձյալ «Գիրք ճանապարհի» ժողովածուի առաջին տարբերակից:

43 Տես Գրիգոր Նարեկացի, Տաղեր, Եր., «Յայպետիրատ», 1957, էջ 100-102:

44 Տես Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981:

45 Տես Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1928:

ԱԿՐՈՍԻՔՈՒ

Արեգակ, ովկիան զորության,
Թողե առ լողե քո հրով
Փայփայի՛ր, տուր զորություն
Եյակին այս յերգի ու սիրո.
Նա դեռ փոքք ե այնքան ու քոյլ,
Իր սիրտը – դեռ սափոր ե մաքուր, –
Կազդուրվի թող նա քո հրով:

Չինի թող որ աշխարհում,
Արեգակ, վոր յես չերգեմ
Բախճական, ուամիկ' այս դարում,
Եյությամբ քո լցված, հրկեզ,
Նվիրված պայքարին այս ու քեզ
Ցարդ չեղած տաղեր ու յերգեր⁴⁶:

Առաջին այս ակրոստիքոսի (մյուս երեքը կարելի է համարել սրա **տարբերակ-ները**) և օրերի տարբերությամբ ստեղծված «Պատգամի» գեղարվեստական փոխկանչը գործում է մի քանի ուղիներով:

1.Գլխավորն այն է, որ զիրքը բացելով իր պոեզիայում դեռ չեղած և հայ նոր պոեզիայում տուկ մեկ անգամ երևացած **ակրոստիքոսվ**. Չարենցը խորաքանաց ընթերցողին մի տեսակ հուշում-հասկացնում է, որ ուշադիր լինի, քանի զգքում, հնարավոր է, ելի կամ նման հնարանի ուրիշ, միզուց բարձված դեպքեր:

2.Պոեզիայի պատմության մեջ շատ չեն այս դեպքերը, երբ հեղինակը ակրոստիքոս պարունակող բանաստեղծությունը հենց «Ակրոստիքոս» էլ վերնագրում է (մեկական այդպիսի գործեր ունեն, օրինակ, Ն. Գոգովը, Ա. Կոլցովը, Ս. Եսենինը): Շատ ավելի սակավաղեա նույն բանաստեղծը ունենում է մեկից ավելի նման վերնագրումներ: Մեզ ծանոք միակ ակնհայտ բացառությունը պատկանում է դարձայլ Չարենցի սիրելի բանաստեղծ Ն. Գումիլյովին, որն ունի «Ակրոստիքոս» կոչ վող առնվազն հինգ բանաստեղծություն: Չարենցն ունի մեկով պակաս, բայց չորսն էլ մեկ գործում, որ, թվում է, դարձայլ բացառիկ դեպք է և բացատրվում է վերստին «Պատգամի» գաղտնազրի գոյությունը ընթերցողին «գլխի զցելու» մղումով:

3.Վերջինով պետք է բացատրել նաև բովանդակությամբ շատ մոտ, տարբերակներ թվացող՝ միանգամից երեք «Ակրոստիքոսների» գետեղումը իրար հետևեցի:

4.Այդ երեք «Ակրոստիքոսները» դրված են նույն բաժնում, որտեղ և «Պատգամն» է՝ վերջինից ընդամենը տասնինից էջ հետո:

5.Այսքան ճակատային քայլերից, վերնագրային «մերկացումներից» հետո Չարենցը կարծես հույսը չի կորցնում, բայց լրիվ վստահ չէ, որ ընթերցողները կնկատեն գաղտնազրված պատգամը: Եվ ահա «Գիրը ճանապարհի» գորի վերջին ակրոստիքոսի եզրափակիչ տողերում նա մի վերջին կարք է նետում ասելով.

46 Ե.Չարենց, Գիրը ճանապարհի, էջ 5:

Ե՞յ, նայիր, նա արդեն խոսում ե...

Նայես ի՞նչ է նրա անոնք.

Ցանկացողը կգտնի, թե ուզում ե⁴⁷:

«**Ցանկացողը կգտնի, թե ուզում ե**», այս միտքը կամ ցանկությունը, որ առավել վերաբերում է «Ով հայ ժողովորդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» գաղտնագրին, Չարենցը գրել է վերջինից ընդամենը մեկ օր առաջ:

6. «Պատգամին» գեղարվեստորեն շրջապատող չորս «Ակրոստիքոսների» նման կուտակման և տերստային ցայտունացման միտումնավորությունը երևում է նաև անուղղակիրթեն: Ժանրատեսակի հանդեպ ունեցած աճրող ուշադրությամբ հանդերձ՝ հետագա տարիներին Չարենցը միայն առիթից առիթ է դիմում ակրոստիքոսի ձևին, այն էլ ալրունային պոեզիային մոտ գտնվող տիրույթում: Պահպանվել է «ՍՍԳԴԱԼԻՆԱ» ակրոստիքոսը՝ իրեն վերջարան «Զքնար Մագդային» շարքի⁴⁸, և մի բանաստեղծությունը իրեն նվիրված, բայց ցավալիորեն չպահպանված ակրոստիքոսի մասին: «Մերժս քավեցի, այս բանաստեղծությունը քեզ եմ նվիրել, ակրոստիքոս է, բանաստեղծության տողերի առաջին տառերը թե որ վերից վար կարդաս, ստացվում է Հոփիվամեն...»⁴⁹:

7. «Պատգամի» և «Ակրոստիքոսների» միջև առկա է նաև գաղափարների մերձավորություն: Առաջինի իմաստային կենտրոնը հայրենիքի ու ժողովրդի փրկությունն է, մյուսներին՝ իր էության շարունակությունը, իր կյանքի իմաստն ամփոփող զավակի ուժեղացումն ու երշանկությունը: Մի կարևոր հանգույցում սրանք հատվում են, որովհետև երեխայի լուսավոր ապագան հնարավոր է միայն ուժեղ, ներդաշնակ հայրենիքում:

8. Վերջապես, կա որոշ հարազատություն մեզոստիքոսի և «արքենիկյան» ակրոստիքոսների ոճի և պատկերավորման ձևերի միջև: Ժողովրդի և սեփական բալիկի՝ երկու գլխավոր սրբությունների փրկությանը կոչված պատգամախոսության ձևին առընթեր ուշադրություն է գրավում **արև-արեգակի**՝ որպես կենտրոնական պատկերի ընտրությունը բոլոր հինգ բնագրերում:

«Նոր լույս ծագեց աշխարհին. Ո՞վ այդ արևը բերեց»,— այսպես է սկսվում «Պատգամը», իսկ հաջորդող սողերում բազմիցս հայտնվում է այդ արևը՝ «չքնաղ», «ոսկյա» մակդիրներով, «այգարաց», «լույս» և այլ հարակից բառապատկերներով: Այս լույսն ու արևը, որ կցկոտուր մեկնաբանությունների մեջ անվարան բացատրվում են իրեն խորհրդային կարգերի այլարանություն, իրականում խորհրդանշում են նաև կեցության դրական հիմունքը: Նման ըմբռնումը ճիշտ է միայն **մասնակիորեն**, այնքանով, որ մեծ պատերազմից, պատմական հայրենիքի կորսացի և Եղեռնից հետո **հավաքական** ժողովրդի գոնե մի հատվածը թեկողի կարծ ժամանակով խաղաղություն ու ստեղծագործ աշխատանքի հնարավորություն էր գտել:

Բայց չենք մոռանում նաև, որ արևը ի սկզբանե և դեռ խորհրդային կարգերից շատ առաջ Չարենցի բառարվեստի կենտրոններից էր: Որպես կյանքի զորության և երջանկության խորհրդանիշ՝ այն լիուի արտահայտվել է նաև ակրոստիքոսներում: Դրանցից երկուսը սկսվում են «**արեգակ**», մյուս երկուսը՝ «**արև**» բառերով:

47 Նույն տեղում, էջ 288:

48 Տես Եղիշե Չարենց, Նորահայտ էջեր, էջ 108:

49 Յուշեր Եղիշե Չարենցի մասին, Եր., «Սովետական գրող», 1986, էջ 211:

«Փոքրիկ մանկիկը արևի նման է» զաղափարից ավելի այստեղ տիրական է արեգակին ուղղված և քանից կրկնվող «Փայփայիր, տո՛ւր զորություն էակին այս» պատգամ-հորդոր:

Բնագրային կարևոր մի նկատառում հերոսուհու անուն-ազգանունը կազմելու համար Զարենցը ամեն բնագրում երկուական անգամ պէտք է բառ կազմեր թ տառով և հայերենի այդ բարդությունը հաղթահարելու համար քանից կրկնում է «**բոպե**» բառը: Բայց հավանաբար բառային ճանձրույթը փարատելու համար երկու անգամ պեղել և գտել է հազվագյուտ և նույնքան գեղեցիկ բառեր՝ «**բախճական**» և «**բարբի**»: Նույն խնդիրը լուծելու համար երկուական անգամ էլ հարկավոր էր բառ սկսել **ա-ով**, որը շատ դյուրին էր: Բայց Զարենցը բոլոր ուր դեաքերում օգտագործել է «**արեգակ**» կամ «**արև**» բառերը: Անշուշտ, որևէ մեկի մտքով չի անցնի դրանք դիտել իբրև խորհրդային կարգերի այլարանություն: Եվ նոյն օրերին ստեղծված այս «**արևերը**» օգնում են փիլիսոփայական-կենսական մի կարևոր ենթաշերտ տեսնելու նաև «Պատգամի» «**ոսկյա արևի**» մեջ, ազատելու այն սոցիոլոգիական կաղապարից:

Այս պահին մենք մոտենում ենք կարևորագույն մի հանգույցի՝ «Պատգամ» բանաստեղծության ամբողջական բնագրի որպիսության խնդրին: Բայց մինչ այդ խիստ համառու դիտարկումներով անդրադառնունք բուն մեզոստիքոսի ևս մի քանի հատկանշներին՝ գուգադրելով դրանք ակրոստիքոսի վաղնջական ավանդույթի հետ:

«Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» տողը, ձևով լինելով **մեզոստիքոս**, եռյամբ ծածկագիր է (շիֆր): Ծածկագրման ակրոստիքոսին ավանդույթը սկիզբ է առնում դարձյալ անտիկ աշխարհից՝ հնագույն մոգական տեքստերից: Կիկերոնի վկայությամբ՝ իին աշխարհի գուշակուիհ Սիրիլլան իր մարզարետությունները քարցնում էր ակրոստիքոսների միջոցով: Վաղ քրիստոնյաները հալածանքներից խուսափելու համար ակրոստիքոսի ձևով օգտագործում էին «ICQUS» (ՉՈՒԿ) բառը, որի սկզբնատառերը նշանակում էին «ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ, ԱՍՏԾՈ ՈՐԴԻ, ՓՐԿԻՉ»:

Սակայն Զարենցի **մեզոստիքոս-ծածկագիրը**, ի տարբերություն հապակման բնույթ ունեցող տառային զալունագրումների, **ամբողջական նախադասություն** է: Նախադասություն-ակրոստիքոսները այնքան շատ չեն, որքան բառերն ու բառակապակցությունները, բայց առկա են թե՝ ընդհանուր գրականության, թե՝ ազգային ավանդույթի մեջ: Օրինակ՝ Ներսես Շնորհալին իր գործերից մեկը նվիրել է Սլիքար Հերացուն՝ երկտող տների առաջին տառերով կազմելով հետևյալ նախադասությունը. «ՄԵԽԹԱՐ ԲԺԻՇԿ, ԸՆԿԱԼ Ի ՆԵՐՍԵՍԻ ԶԱՅՍ ԲԱՆ»⁵⁰: Վերջինս բնորոշ օրինակ է նաև նրանով, որ, ինչպես և «Պատգամը», **հասցեագրում** պարունակող նախադասություն է:

Բայց «Պատգամը» ոչ թե սույն նախադասություն է, այլ ամփոփ միտք արտահայտող իմաստախոսություն՝ **աֆորիզմ** (ի դեպ, թարգմանելիս «պատգամ» բառը շատ լեզուներում նշանակում է հենց «աֆորիզմ») կամ **թևավոր խոսք**: Սա նոյնպես իին ավանդույթ է և արտահայտված է մասնավորապես Աստվածաշնչում: Ըստ մասնագետների, ասենք, Երկրորդ օրինաց գրքում Սովուսի մի հարց-նախադասության բառերի առաջին տառերը կազմում են «MYLH»՝ «թլպատում», իսկ վերջին տառերը՝ «YHWH»՝ «Եհովա» բառերը, որոնք ծածկագրումով շաղկա-

⁵⁰ Տես Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, էջ 319-324:

պում են «Թղթատման միջոցով հասնում ենք Աստծուն» աֆորիստիկ միտքը⁵¹:

«Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» պատգամ-աֆորիզմն ունի ընդգծված **քաղաքական բնույթ** և ծածկագրվել է գրաքննչական արգելվները հաղթահարելու և երկի ու հենց իր՝ հեղինակի կյանքը չվտանգելու նախակով: **Առաջինը հաջողվել է, երկրորդը՝ ոչ:** Զարմանալի է, բայց ուստական հեղափոխության ու խորհրդային իշխանության հենց սկզբից մի ամբողջ շարք հեղինակների հաջողվել է հնարամիտ ձևերի օգնությամբ հաղթահարել խմբագրական կամ գրաքննական պատճեշը: Օրինակներից մեկը ապշեցուից է նրանով, որ սարկաստիկ ձևով ուղղված է հենց վերջինիս դեմ: Գրող Ա. Ամինութատրովը Փետրվարյան հեղափոխությունից մեկ ամիս առաջ տպագրել էր լրագրային ֆելիտոնն, որի **բառերի առաջին տառերով** կազմել էր հետևյալ վտանգավոր ակրոստիքոսը. «РЕШИТЕЛНОНОЧЕМПИСАТНЕЛЗЯПРЕДВАРИТЕЛНАЯЦЕНЗУРАБЕЗОБРАЗНИЧАЭТЧУДОВИЩНО» («Վճռականորեն ոչ մի բանի մասին գրել չի կարելի. նախնական գրաքննությունը այլանդակվել է հրեշավոր կերպով»):

Խորհրդանշական իմաստ ունի այն ցնցող բացահայտումը, որ ժամանակին իր դիպլոմային աշխատանքը գրելիս արել է ուս գրող Վ. Շումիլինը: 1917 թ. հոկտեմբերի 25-ին նոր կարգերի առաջին օրը, «Պրավդա» թերթը տպել էր «Կրասնի» մականունով անհայտ բանաստեղծի ուսանավորը, որ արտաքննապես փառաբանում էր հեղափոխությունը և վերնագրված էր «Պրոլետարիատի հիմնը», իսկ ակրոստիքոսով ասում էր այն, ինչ Լենինի և նրա կողմնակիցների մասին դառը հեգինանքով ասում էին Պետրոգրադում. «Մի հեմեցք ապօն և պրօկլատոր»⁵²:

Վերջին օրինակը բնութագրական է նաև բովանդակային առումով, քանզի երբ այդ բանաստեղծության տողերը կարդում ենք ակրոստիքոսի լույսով, ժողովրդի համար պատրաստվող նոր լծին վերաբերող մտքերը սահուն կերպով հատկացվում են իրական հասցեատիրոջը՝ նոր իշխանություններին: Նույն այն իշխանություններին, որոնց ուղղված էր նաև մեկուկես տասնամյակ անց հղացված շարենցյան ծածկագիրը:

5. Ուղղահայաց «Պատգամի» բովանդակությունը

Դարձյալ իշենք, որ մեզոստիքոսը համարվում է «առեղծվածային ձև», և զարմանքով արձանագրենք ամենաարտառողը՝ «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» ասույթը, որ հայերեն ամենից հայտնի նախադասություններից մեկն է, մինչև օրս հստակորեն բացատրված չէ նաև **լուս էության**: Ի՞նչ նկատի ուներ Զարենցը, ինչի՞ց էր դժողի, և ումի՞ց կամ ինչի՞ց պետք է փրկվի հայ ժողովուրդը: Ի՞նչ է նշանակում «ՀԱՎԱՔԱԿԱՆ ՈՒԺ»:

Սոտ ուր տասնամյակների ընթացքում այս հանելուկային հարցերին տրվել են բազմաթիվ պատասխաններ: Համարժեք և հիմնավոր եղբահանգման հասնելուց առաջ վկայակոչենք այդ բացատրությունները՝ ժամանակագրական որոշակի

51 Աստվածաշնչան ակրոստիքոսների մասին տես Յ. Եղլինգեր, Имя Иеговы в книге Есфирь. http://www.liveinternet.ru/users/zinaida_khugashvili/post209755108/

52 Տես Ռու Շումիլին. Յ. Կամ հաջուկ առաջարկությունները հաղթահարել են առաջարկությունները՝ ժամանակագրական որոշակի

հերթականությամբ և հնարավոր խմբավորումներով։ Չխճճվելու համար հենց սկզբից առանձնացնենք առանցքային և ամենից ճակատագրական հիմնախնդիրը։ Չարենցը հայ ժողովորդի փրկությունը պատկերացնում էր **Խորհրդային Միությունից դո՞ւրս**, թէ՝ նրա կազմում։

1. Մուղղուսու և Գևորգովի տեսակետ: Եթէ շիազվենք բուն գրվածքը, աս ժամանակագրության մեջ՝ հայրական առաջին վարկածն է՝ հայրական 1936 թ. նոյեմբերի 16-ին ՆԳԺԿ-ում. «**Դուք անց եք կացրել հետևյալ բռվանդակության հակահեղափոխական, ասցիոնալիստական լոգունգը.** «**Ով հայ ժողովորդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է։» Ըստունո՞ւմ եք, որ այդ լոգունգը հակահեղափոխական, դաշնակցական է»⁵³. Լուելով Չարենցի հերթում՝ քննիչներն այլևս մեկնարանություն չեն ավելացնում և միայն դրանիւ են նոր հարցեր։**

Այսպիսով՝ թեպեկի հարց ու պարապահանի արանքում, Խորհրդային Հայաստանի պետրական անվտանգության մարմնի առաջին երկու դեկավարները՝ «Պարզամի» գաղղրմագրի համարում են հակահորհրդային և ազգայնանուական, հընթաց, արդեն հարցի մեջ հնչած «**դաշնակցական»** բնորոշումը ավելի է ամրապնդում գենակետը, քանզի 1936 թվականին այդ բառը կարող էր հասկացվել հենց «հակահորհրդային» իմաստով։ Հարցի ծնուվ առաջադրվում է նաև պարագանական հակափաստարկ։ «Եթէ, ուստի Զեզ, այդ լոգունգն ամրողովով հակահեղափոխական չի համարվում, ապա ինչո՞ւ եք Դուք այն այլպես գաղղրմագրել»⁵⁴.

2. Չարենցի տեսակետ (հարցաքննության տարրեղակ): Առկա են Չարենցի մի քանի տեսակետներ՝ արդահայրած բուն քննագրում, հարցաքննության ժամանակ, ուրիշների խոսակցության մեջ և հուշագրական վկայություններում։ Դրանք եթէ իրարասերժ չեն, համենայն դեպք զգայիրեն պարբերվում են իրարից։

Այս դարրերակը պետք է զնահավիճ՝ հարցաքննության սպառնալից մքննորդը հաշվի առնելով։ Ընդունելով գաղղրմագրի գրյուրյունը՝ Չարենցը, սակայն, փնտրում է խուսանավման ուղիներ։ «Բայց ես ամենինին դա չեմ համարում հակահեղափոխական, դաշնակցական լոգունգն որովհեկ են նկատի ունեն ժողովորդ հասկացությունը, սկզբունքորեն պարբեր ազգ գերմանից, որը կիրառում են դաշնակցականները»⁵⁵.

Դաշնակցության խնդիրը հենց սկզբից շրջանառվում է «Պարզամի» մեկնարանություններում, բայց այն ածանցյալ է և բխում է ասույրի հակահորհրդային (ժամանակի բառով՝ «հակահեղափոխական») բնույթի հավանականությունից։ Չարենցին բվում է, որ քննագրում «ազգ» բառի փոխարեն «ժողովորդ» բառի առկայությունը բավական է քննիչներին համոզելու, որ ինքը նկատի ունի Խորհրդային Հայաստանի ժողովորդին։ Այդպես կարելի է հասկանալ «Պարզամի» գրույրան շարժառիթների մասին Չարենցի լուսական բացակարությունը, որն իր միամբուրյամբ ընկալելի կարող է լինել միայն հարցաքննության պայմաններում։ «Այդ բանապետական ժողովությունը գրված է 1933 թվականին, երբ դրույթունը Հայաստանի լեռնային շրջաններում, ինչպես հայրական է, աղեղակի էր, ինչն էլ իմ գրքի որոշ գեղեցիկ մասնավորապես այդ լոգունգում, օրյեկտիվ նախադրյալ է հանդիսացել իմ որոշ հոռեւրիստական դրամադրությունների համար»⁵⁶։ Սոցիալական խնդիրները նույնական մրանակություն էին Չարենցին և նրա համախոհներին, բայց այդպիսի, նույնիսկ ավելի սուր հարցը չէր կարող պարձառ դառնալ «Պարզամի» սրբեղջուան համար։

53 Եղիշե Չարենց, Նորահայտ էքեր, էջ 371։

54 Նույն տեղում, էջ 372։

55 Նույն տեղում, էջ 371։

56 Նույն տեղում, էջ 371-372։

Նոյն նեղացումը և տեղայնացումը կարարվում են այն հարցին պարասիանելիս, թե ումի՞ց էր «պարապլում փրկել հայ ժողովրդին»: «Այն դեկավարմաներից, որոնք Հայաստանի նշանած դրույքան մեղավորման են»⁵⁷, – ասում է Զարենցը, որովհետիւ չէր կարող ասել որ պարապլում է հայ ժողովրդին փրկել ուսական փրապեկորյունից կամ Խորհրդային Սիուրյան դեկավարույթունից (ի դեպ, 1933 թվականին Հայաստանի երկու գլխավոր դեկավարներն էին Աղասի Խանջյանը և Սահակ Տեր-Գարբիելյանը, որոնց վարած քաղաքականուրյունից Զարենցը կիմնականուն գոհ էր և դժգոհից, նույնիսկ ողբերգուրյուն ապրեց նրանց «հեղացումից», որը եղավ «Պարզամից» երկու-երեք դրաբի հելոր):

Այս երկխոսությունը և Զարենցի կարծիքը դրամարանական ավարտի են համարում, երբ կասկածյալ բանասրեղը պարասիանում է Մուղուտու (կամ նրա տեղակալի) այն հարցին, թե ինչո՞ւ է զաղկընագրել «Ընդունում եմ, որ չնայած իմ սույնեկարիվ պարկերացմանը այդ լոգունից բովանդակության մասին, որպես ոչ հակահեղափոխական, ամբողջությամբ և լրիվ կարող էր ընկալվել որպես հակահեղափոխական»⁵⁸:

3. ԽՍՀՄ Գլավիտի տեսակետ: 1937 թ. հունվարի 27-ին, երբ զաղկնազերծումը կարարված էր անկրանգության մարմինների մակարդակով, ՀԿ(թ)Կ Կենտրկոմի առաջին քարոզությար Անկրունու անունով արացվում է մամուլում ռազմական և պետական զաղկմանը երի պահպանաման միութենական պարասիանարու, ՌԽՍՖՀ Գլավիտի պետը Ս. Ինգուլովի գրույրում, որի մեջ «Պարզամի» զաղկնազիրը առանց մամրաւմանելու միաձանակորեն համարվում է «Աացիննալիստիկան լոգունիք». «Հայրմի հայ բանասրեղ Եղիշե Զարենցի «Գիրք ճանապարհ» գրքում (լուս բեռսած 1933 թվականին) զերեղված է «Պարզամ» վերմագրով բանասրեղություն: 269-270 էջերում զգնվող այդ բանասրեղություն առաջին դրամարդության առաջին դրամարդության հետո երկրորդ փորձարարությունը եթե կարգացվեն վերնից ներքի (բանասրեղություն սկզբից մինչև վերջ), կարացվի հերկյալ նացիննալիստիկան լոգունիքը. «Ու հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»: Խնդրում եմ շրապ պարասիանել այդ գրքի առքիվ ծեռնարկված միջոցառումների մասին»⁵⁹:

Այս գրույրում պահվում է Հայաստանի պետական արխիվում: Իսկ մուկովյան պահոցում պահվում է ճիշտ նոյն բովանդակությամբ մեկ այլ փաստաբուք, որը գրաքննչական գլխավոր մարմինը նոյն բանական մարդի 1-ին «զաղկմի» նշունչը հասցեագրել է ՀամԿ(թ)Կ ԿԱ քարոզությար Ա. Ժղանովին: Վերջում զեկուցվում է. «Հայաստանի Գլավիտի հեռագիր է ուղարկվել գրքի արգելման մասին»⁶⁰:

Այսիսով՝ Գլավիտը իր հավաքական իրազեկող ՆԳԾԿ մարմինների նման հաստիքած է համարում «Աացիննալիստիկան լոգունիք» դեսակելիք: Վերջինիս անուղղակի, բայց խիստ պերճախու վկայությունն է այն, որ Զարենցի այլնայլ «մեղքերից» հենց «Պարզամ» է դառնում «Գիրք ճանապարհ» ժողովածոփ արգելման պարագաներ: Համեմայն դեպք, ուս է պաշտոնական դեսակելիքը, որին համահունչ են նաև ժամանակի զաղափարական սպասավորման մասին իր՝ Զարենցի բացարրությունները:

4. Զարենցի տեսակետ (Ավեսիք Խսահակյանի հետ ունեցած գրույրի տարբերակ): Նոյն ժամանակ՝ 1937 թ. ապրիլի 11-ին, Հայաստանի Գրողների միությունում կայա-

57 Նոյն տեղում, էջ 372:

58 Նոյն տեղում:

59 Գ. Գասպարյան, Փակ դրսերի զաղտնիքը, էջ 29-30:

60 Գ. Միրզոյան, Приговорить к расстрелу, «Ноев ковчег», 2010, N 3 <http://noev-kovcheg.ru/mag/2010-03/1993.html>

ցած մի նիստի ընթացքում Ազար Վշպունին քանից կրկնում է, որ Զարենցը «**Ասցին-Անդիսպական գրող**» է, և պահանջում, որ նրա հետ կապ ունեցող մեկը իրենց գեղե-կացնի, թե նա ինձնա իմայու է զբաղված: Ելույր է ունենում Իսահակյանը և մասնավորապես վերապատմում գրմային մեկուացման մեջ գրմակող քանափեղծի այն խոսքը, թե «**Պարզամիք**» իր միակ հանցանքն է: «Հեկո հարցրել եմ՝ իմշո՞ւմն են քեզ մեղադրել և նա երդիկ է իր կնոջով, իր երեխայով, Հայաստանով, ամեն քանով, որ իմքն անմեղ մարդ է, միակ հանցանքն այն է, որ նա գրել է մի ուրանավոր, որի մասին դուք գիտեք...»⁶¹: Նկարենք, որ անզամ ամենամիտերիմ մարդկանցից մեկի հետ վա-րած առանձնազրույցում Զարենցը նոյնիսկ նվազագույն չափով չի ընդունում ոչ դեռորիգմի, ոչ հակախորհրդային խմբի, ոչ պրոցեսազներին հարելու մեղադրանքե-րը (անշուշտ, չի բացառվում նաև Իսահակյանի դիվանագիրական որոշ զգուշափրուր-յունը «գիշապիշմերի» շրջապարում), բայց խոսրովանում է զաղմագրով բանա-տիեղուրյուն գրելու մեղքը, այն էլ՝ որպես «**միակ հանցանք**»: Ու թեև դա արվում է առանց մեկնարանուրյան, ակնհայր է, որ «հանցանքը» ասույթի ազգային բովանդա-կուրյունն է: Ակնհայր է նաև, որ այս բնրոնումը ակամա հերքումն է հարցարձնուրյան դարբերակի շարենցյան խոսանավման՝ «Հայաստանի լեռնային շրջաններում» սպեղծված աղեկալի դրույյան արձագանքերու լուսակենդրի: Վերջինիս զավեշ-դախառն աղավաղումն է այն կարծիքը, որ վերինիշյալ նիստում ներկայացրել է Գևորգ Արովը՝ Իսահակյանի ելույթից անմիջապես հետո:

5. Զարենցի տեսակետ (Գևորգ Արովի վկայակոչած տարբերակ): Ի հակադրուր-յուն Զարենց-Իսահակյան երկխոսուրյան՝ ժամանակի դերը դարձած միջակուրյունը վերապատմել է իր խոսակցուրյունը Զարենցի հետ: «Մաս այս լոգունիքն էր, և իհարկե այս լոգունը անմեղ լոգուն չէր, ինչպես Զարենցը բացարձի է ընկեր Իսահակյանն: Եվ, ընկեր Իսահակյան, Զարենցն իրեն միայն այս խմելում է հանցագործ համարում, սակայն դա միակ հանցանքը չէ: Ես պետք է ասեմ, որ սկզբում, երբ ես նրա հետ խոսել եմ այդ մասին, նա սկսել էր երկերեսանի կերպով խոսել այդ մասին, որ ես այդ բանն ասել եմ՝ ի նկատի ունենալով մեր կոլյուզային հասարակարգի սպեղծումը»⁶²: Լեզվի և մորքի հակասուրյուններով լեցուն այս վկայուրյունը կարելի էր համարել նաև հորին-ված, եթե չիններ այն որոշակի ներդաշնակուրյունը, որ առևս է Մուղղուսուն և Արովին Զարենցի դրած բացարդուրյունների միջին: Երկրորդը, որ ամենայն հավանականուր-յամբ հմտէ է առաջինից հետո՝ 1936 թ. նոյեմբերի 16-ից մինչև 1937 թ. ապրիլի 11-ն ըն-կած ժամանակահավաքում, նոյնաքան խոսափողական է (այդպես պետք է հասկա-նալ Արովի օգործությած «երկերեսանի» անպարկեշտ բառը, որ նոյն շրջանում, բայց մեկ այլ առիրով օգործությած է նաև լիբրահուշակ Ամավունին): Հավանաբար Զարեն-ցը ակնարկել է կողեկիդիվացման ժամանակ գրեղ գրած աղեկավոր երկույթները՝ բռնի ունեղքրկում, կուլակների ահարեկում, զյուղացիների բռնի գեղամիտում արյունաբե-րական կենարոններ, սով, մի խոսքով՝ «Հայաստանի լեռնային շրջաններում» սպեղծ-ված այն աղեկալի դրույյանը, որ բար հարցարձնուրյան տարբերակի իրքը թե ըն-կած էր «**Պարզամիք**» զաղամարական համրամբ և ամրոխավարական մակուցմամբ կորզում դահլիճի ծիծաղը: Այդ վիրապորական ծիծաղը խորքի մեջ հերքումն է «**Հայաստանի**

61 Զարենցապատում ըստ անտիպ վավերագրերի. 3. Բախչինյանի հրապարակումներով, մեկնաբա-նությամբ և ծանոթագրություններով, Եր., «Սարգսի Խաչենց», 1997, էջ 97:

62 Նույն տեղում, էջ 98-99:

լեռնային շրջանների» ու «կոլխոզային հասարակարգի» հարակից դարբերակների և հիմք է դասի Արովին գրական հասարակության «ընդունու» այդ անհու հերթումը վերածելու խմար հասկանալի դրամարանական լեզվի. «Տեսն՝ ոմ եք, բոլոր ժիշտանում եք, ես խնդիրը շատ պարզ եմ դառնամ, եթե նրան հարցրել եմ, թե ուս ինչ է նշանակում, աս պարասիանել է, որ ուս Հայաստանի կոլխոզների մասին եմ գրել ինչո՞ւ կոլխոզների մասին գրել գաղտնի, ինչո՞ւ կոլխոզների մասին չգրել ուղղակի գրի ճակարտին, ո՞վ է նրան խանգարել նրան մեղքը միայն գրելու մեջ չէ, այլն նրանում, որ այդ գրածը ուղեցի է բարցնել»⁶³:

«Ինչո՞ւ կոլխոզների մասին գրել գաղտնի» սա հարց չէ, ավելի ճիշտ՝ ճարդասանական հարց է կամ **հերթում հարցով**, որ շուրջ հիմնական առաջած հարցարձնության ընթացքում կիրառել էին նաև *Մուղդուսին* և *Գուրզովը* («Երե, բար Զեզ, այդ լոգունգն ամբողջովին հակահեղափոխական չի համարվում, ապա ինչո՞ւ եք Դուք այն այդպիս զաղբնազրել»): Պետականվաճուրյան դեկավարները իրենց այդ հարցին չեն պարասիանում կամ պարասիանում են իրենց հելուազան գործողություններով: Իսկ Գուրզ Արովը նոյն եղույթում դրան է նաև այն բանի բացակրությունը, թե ըստ իրենի ինչ է նկատի ունեցել Չարենցը: Չրանով էլ ի դեպ, աս **յուրովսանն** ուղղորդում է մուղդուսիների մուրալուր գործողությունները:

6. Գուրզ Արովի տեսակես: Եղույթի սկզբում անհիմն վերագրումով պնդելով, թե Խահակյանը համաշանում է Չարենցի կարծիքին՝ Արովը խորացնում է նացիոնալիզմի մնացարանը և ասույթի մեջ գենանում որոշակի քաղաքական ծրագիր: Ըստ այդմ՝ Չարենցը գրել է «ակրոսպիքո», «որդեռ դրել է նացիոնալիստական դրամարդություններ, որդեռ դրել է հայ ժողովրդի հավաքագրման խնդիրը: Այդքեր իմաստը այն է, որ հայ կավիրալիստները պետք է հավաքին Հայաստան, և այսինք Նուբար Փաշան պետք է զա, որ այսինք պետք է սպեղծվի հայկական բորժուազիայի դրամակիրույն մի վայր»⁶⁴:

«Պատգամի» այս մեկնաբանությունը «փայլում է» իր կոնկրետությամբ: Ասույթի մեջ Նուբար փաշայի մասնակցությամբ **արևելյան Հայաստանում** (ոժվար չէ ենթադրել՝ խորհրդայինի փոխարեն) **բորժուական** պետություն սրբազնություններուն համար, իրավի, միծ երևակայություն էր պետք, և երբեմնի ֆուլուրիստ Արովը դրսություն է այդ ունակությունը: Մեծագոյն սիսալը, որը կարելի է քոյլ դրալ «Պատգամի» բովանդակությունը վերաբրադրելիս, այն դասակարգային կամ կուսակցական, առավել ևս՝ անձնային որոշակիացման և նեղացման հանգեցնելն է: Քննարկումից դուրս դնելով Խորհրդային Հայաստանի նկարմամբ բարեհած (լոյալ) Նուբար փաշայի խցկումը բանապետության ասելիքի դրույթ՝ արձանագրենք նաև ասույթի կուսակցական կազմակարությը: Խահակյանի մի կարճ ուսումնակից հեկոր Գուրզ Արովը եղարկացնում է. «Այդ դաշնակցական լոգունգն է, այդպիսի լոգունգ միայն դաշնակները կարող են դրալ այդ հայկահեղափոխական լոգունգը նաև աշխարել է մաքսանենգ կերպով հրապարակել մեր մասսաներին, սա մի դարպարակելի հակահեղափոխական գործ է գրովի համար»⁶⁵:

Սուլդուսու, Գլավլիդի և Արովի դեսակերների հարազարությունը բացահայտ է. երեքում էլ մեղադրանքի առանցքը «նացիոնալիստական» բառն է, իսկ Մուղդուսու և Արովի մեղադրականներում, բացի այդ, ընդհանուր են ևս երկու ահազդու բառեր:

63 Նոյն տեղում, էջ 99:

64 Նոյն տեղում, էջ 98:

65 Նոյն տեղում, էջ 99:

Առաջինը «հակահեղափոխական» պիտակն է, որ այլապես նշանակում է «հակասովական»։ Ժամանակի քաղաքական բառապաշտում վերջինիս գլխավոր հումանիզմից մեջ էլ «դաշնակցական» է, ուստի այն ևս պարտադիր դեղու ունի թե՛ Սովորությունը Գնորդովի հարցաքննության, թե՛ Գնորդ Արովի հրապարակային ելույթի սկզբույթուններում։

Եվ արդեն քամիերորդ անգամ «Պատգամը» հայրնալում է առեղծվածների մուր դաշտում։ Բանն այն է, որ Պետքաղվարչության քննական կողմանից և խորհրդային գրողների դեկավարից հեկո, առանց տեղյակ լինելու նրանց կարծիքներին, դարձներ հեկո «Պատգամի» գաղղրմագրված «քանալու» դաշնակցական բովանդակության մասին խոսել է ՀՅԴ հայցի գործիշ Վահան Նավասարդյանը։

7. Վահան Նավասարդյանի տեսակես: 1957 թ. Կահիրենում դասագրված, հետազոյում Թեհրանում, իսկ վերջեն՝ Երևանում վերահրապարակված գրքում Զարենցին անձնապես և գործով լավ ճանաչող հեղինակը անշափ հետարքության համարուր անդրադարձ է կարարել նաև «Պատգամ» քանակենդությանը։ Վերջինս համարելով որևէ իմաստից գործի գրվածք՝ նա «հնարամիր քողարկության պակ» դեսնում է «Զարենցի քաղաքական կուսակը իր ժողովրդին»։ Ուշագրավ է, որ դրաց ներված ազակ հայացքով հանդերձ՝ Նավասարդյանը նոյնական ասույթը համարում է հակախորհրդային և դաշնակցական։ Տարբերությունը շեշտադրում էր մեջ է հակառակ ուսու և հայրենի հավաքարնախնդիրի՝ նա գովեստով է խոսում այդ հավաքանիշների մասին, դրամը դիրքում իրոն համազգային գաղափարի խրացումներ։ Ըստ այդմ՝ Զարենցը հայ ժողովրդի փրկությունը դրևանում է նրա հավաքական ուժի մեջ։

«ՀԱՎԱՔԱԿԱՆ ուժի և ոչ թե այդ ուժից անջարված միայն մեկ մասի, որ կոչվում է Բոլշևիզմ։

Այդ հավաքական ուժի ՀԱՍՏԵՐԱԾԽՈՒԹՅԱՆ մեջ է և ոչ թե այն քշնամանքի, որ հրահրում է Բոլշևիզմը ոչ համայնավար հայության դեմ։

Փրկությունը ՀԱՍՏՁԳԱՅԻՆ իդեալի մեջ է և ոչ թե հակընդեմ և իրերամերժ ձգութանքից։

Նրա մեջ է, որ մի և միացյալ ամբողջություն կազմեն հայության բոլոր կենդանի, գործոն և սպեհադարար ուժերը՝ հանուն հայրենիքի և ժողովրդի փրկության։

Նրա մեջ է, որ այս ուժերը արդարին ճնշման դրակ երկու քշնամի բանակների շրաժաննեն՝ ամսպուղ պայքարների մեջ իրենց բովանդակ խանդն ու կորովը սպառելու համար։

Նրա մեջ է, որ հայունապես հակահայ նպարակով ճակար չհարդարվի հայության մեկ ընդունակույն հարմածի՝ Հ. Յ. Դաշնակցության դեմ, որ առափորեն այնքան արյուն բարից ի խնդիր իր հայրենիքի ազակության։

Ահա և Զարենցի պատգամը»⁶⁶։

Վահան Նավասարդյանի այս ծավալուն կարծիքը մեջբերեցինք լրիվ, որովհենու այն ամփոփ չենով ներկայացնում է Աշմարպությունը շարենցյան գաղղրմագիր ասույթի էության մասին (փոքր-ինչ չափազանցված է թվում միայն ՀՅԴ-ի խնդիրը «Պատգամի» ենթադրեսպից դեպի բնագրի մակերես գեղափոխելու հասկանապի միջումը)։ Արանով էլ կարելի էր լուծված համարել հարցը, բայց դա, ցավոր, անկարելի է հերկյալ պարմառով։ Մինչդեռ ափյուռքահայ գրական միջքը «Պատգամը» համարել է «համայնավարութեն հուսախարված ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ կողմեն»⁶⁷ սպեհադարձ գործ։

66 Վ. Նավասարդյան, Զարենց, Յուշեր և խորհրդածություններ, Եր., 2007, էջ 96։

67 «Հանագային» օրացոյց-տարեգիր-1952, Պեյրութ, 1951, էջ 224։

հայրենի գրողներն ու քննադավաները հետագա լրաբեմերին համառորեն ճգնել են «հայ ժողովրդի միակ փրկության» չարենցյան զաղակարախոսությունը շիակադրել խորհրդային կարգերին: Այս մրացնությունը սկզբանվորվել է Չարենցի արդարացման օրերին և չգվել առնվազն մինչև Խորհրդային Միության վկուգումը:

8. Չարենցի արդարացման ժամանակ ստեղծված հանձնաժողովի տեսակես: 1955 թ. սրեղծվել է Չարենցի և բռնադաված մյուս գրողների արդարացումը մասնագիտության հիմնավորող հանձնաժողով (նախագահ՝ Հ. Քոչար, անդամներ՝ Գ. Բորյան, Է. Թոփչյան, Ա. Ասաբերյան, Հ. Սկրյաբյան, Հ. Սալախյան): Եզրակացության մեջ ի թիվս այլ գործերի հակուլ զնահավական է լրացել «Պատգամին»: Սա չափազանց ուշագրավ կարծիք է, որ լինելով վեց հետինակալոր գրողների ու քննադավաների գիտակեդր, արդարացումը է նաև ժամանակի մրացնությունը: Ըստ այդմ՝ չի ժիշտում զաղպնագրի հակախորհրդային ուղղվածությունը (թեև բացահայտ չի էլ նշվում), բայց կարուղում է հասցեազրման նեղացում ակնարկելով, թե Չարենցը դժոնի էր ոչ թե կարգերից, այլ միայն նրա մի դեկապարից: Ահա հանձնաժողովի լրեսակենոր. ««Գիրը ճանապարհի» մեջ զերեղված է «Պատգամ» ակրոսպիրուը, որի մեջ բանասրեղծը պատգամում է. «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»: Այս բանասրեղծությունը Չարենցին ներքին բողոքի արդարացությունն էր ընդդեմ իմպերիալիզմի լակել Բերիայի բաղաքականության՝ ուղղված Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության ոչնչացման դիմ»⁶⁸:

Տիշտ է, որ Բերիայի գործունեության թանակությունը էական գեղ է գրավում Չարենցի բաղաքական հայեցողության մեջ, բայց «Պատգամը» ուղղված չէ որևէ առանձին անհակի դիմ: Այս ունի համակարգային ուղղվածություն, և հենց խորհրդային համակարգը բանասրեղծության կոնցեպցիայից անջրադեմուրությանը է այն փոխարինվում Բերիայի բաղաքական կիրապուր: Բացի այդ՝ հանձնաժողովը «Պատգամը» համարում է վայր, խորելի գրվածք և նման նեղացում-անձնայնացումով է փորձում բացաբերել Չարենցի «սիսալը»: Այս մոդեցումը ավելի բացահայտ է եղակացության վերջնամասում, ուր հայ ժողովրդին ու նրա մշակույթը հետապնդող Բերիայի բաղաքականության մասին ևս մեկ անգամ խոսելուց հետո շատ բացորդ ասկում է. «Չարենցը հիվանդագին էր արշագանքում այդ բաղաքականությանը՝ երբեմն ընկնելով հոռեկնեության գիրկը, կորցնելով հեռանկարը (Չարենցի «Պատգամ» ակրոսպիրուը)»⁶⁹:

Ուրեմն, ըստ Հրաչյա Քոչարի գլխավորած վեցյակի՝ հայ ժողովրդի միակ փրկությունը նրա հավաքական ուժի մեջ գրեսնելը, այնուամենայնիվ, նշանակում էր չըկնանել նրա զարգացման խորհրդային հեռանկարը: Մի քանի լրացնամյակ անց պատմությունն իմքը հասկապեց շարենցյան «հոռեկնեությունը» իրադարձությունների օրինկողիվ ընթացրով ընդհագելով հայ ժողովրդի խորհրդային-համայնավարական զարգացման ընթացքը:

«Բերիայի լրաբերակից» հետո ասպարեզ է զայիս Չարենցի հմասրախոսությունը խորհրդային կարգերին ու զաղակարախոսությանը շիակադրելու ամենապարագած ճիգ-խոսանակում՝ այսպես ասած «հայրենադարձության լրաբերակը», որն առավել որոշակիորեն հնչում է 1960-ական թթ. վերջին և լրեսում մինչև ԽՍՀՄ կործանումը: Իրեն մրացնություն կամ մոլորություն՝ այն հասնում է անգամ մինչև մեր օրերը:

68 Եղիշե Չարենց, Նորահայտ էջեր, էջ 613:

69 Նույն տեղում, էջ 619:

9. Չարենցի երկերի գիտական հրատարակության կամ Ալմաստ Զաքարյանի տեսակետ:

1968 թ. փորբ-ինչ ուշացումով լրագրության շորորդ հավորի ծանոթագրություններում Ա. Զաքարյանի «Պատգամի» սկզբնաման դրդապարճառների և գաղափարական նպարակառողման զնահարման մեջ բացարձակ և անվերապահ առաջնորդյունը լուսնի է սովորական կառավարության կազմակերպած հայրենադարձությանը. ««Պատգամի» հայությանն ուղղված համախմբման կոչ է՝ Սովորական Հայաստանում կառուցելու իր ապագան»»⁷⁰:

Հարակից դարպողությունների կողքին՝ հայրենադարձությունը իսկափանել փորձող դաշնակցականներ, Հոկտեմբերի փրկարար դեր, համախմբման նոյն միջոցը «Գիրք ձանապարհի» այլ գործերում, այսպես բացակայում է զլիավորը: Եթե հայրենադարձությունը, «ընդառաջնով հայ աշխարհավորության բաղչանքներին», կազմակերպել էր խորհրդային կառավարությունը, ինչնո՞ւ էր Չարենցի իր կոչը գաղղրագրել: Եվ հետո, եթե իրոք դա էր Չարենցի նպարակը, ինչնո՞ւ Մուղուստն և Արովի կարգի հոգեհաններին չէր ասում, թե ինքը նկատի է ունեցել ազգածովման վրանգի առջև կանգնած հայության ներգաղըք: Դժվար չէ պարկերացնել, որ այդ դեպքում նրանք կրային նոյն հարց-հերքումը, որ հնչեցնում էին «Հայաստանի Խոհնային Ճշշաների» և «Կոլխոզային հասարակարգի» շինծու բարբերակները լսելիս՝ «Ինչնո՞ւ եք Դուք այն այդպէս գաղղրագրել»:

Հանուն արդարության պարզաբաններ, սակայն, որ բերվածը սուկ կազմովի անձնական դրեսակերպ չէր: Նաի՝ 4-րդ հարորդ հավանաբար անը՝ «Պատգամի» պարագանով, ունեցել է ծանր երկունք, և նրա ծանրությունները ենթարկվել են փորձության: Ապա՝ այդ «Վրանգավոր» հավորը ունեցել է խմբագրակազմ, որի անդամների քարերում անգամ պարզապես է: Կազմովից բացի՝ այսպես են Ա. Աղարարյանը, Ա. Ինձիկյանը, Գ. Մահարին, Եղ. Ջրաշշանը և Պարույր Սևակը, իսկ վերջինն նաև հայորդի խմբագիրն է (մյուս հինգ հավորներից ոչ մեկը անհայտ խմբագիր չունի): Ուզենք թե չուզենք՝ «հայրենադարձության բարբերակը» փաստացի նաև այս հինգ հեղինակությունների դրեսակերպն է⁷¹: Ուստի զարմանալի չէ, որ այն ժամանակ առ ժամանակ հայունում է բարբեր գրականագերների և հուշագիրների գրվածքներում: Չորրորդ հավորից մի քանի դրադի անց, և դրա ակնհայր ներգործությամբ, նոյն դրեսակերպն արդահայրվել է Վ. Գարբիկյանի «Չարենցի արդարահամայնա ուղևորությունը» և «Արևմտահայ պոեզիան Չարենցի զնահարմությամբ» գեկուցումներում⁷²: Բայց արդեն խորհրդային կարգերի վերջին բարում լույս է դրեսել հայունի «Պատգամին» նվիրված հոդված, որի հեղինակը գրում է. «Ազգային համախմբվածության այս ծրագիրը Չարենցին արձարժում էր այն բարին հարակին երին, երբ ասդիմանաբար Խորհրդային Հայաստանի ճանապարհն էին բռնում պարմական հայրենիքից արդարաված հայորդիները»⁷³: Այնուամենա մինչև Հայաստանի Անկախության հոչակագիրը մնացել էր մեկ ամիս...

«Հայրենադարձության բարբերակը» հավանական կարող է թվայի ճնական դրամարանության դիրքերից՝ նկատի ունենալով բուն հայրենադարձության սկզբանը և

70 Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 606:

71 Չորրորդ հաստորի ծանոթագրությունների աղավաղման, Պարույր Սևակին դրա խմբագիր նշանակելու կասկածելի դրշման և հարակից հարցերի մասին տես կազմով հուշերը. Ա. Զաքարյան, Գրականության և պատմության ընթացքները, Եր., «Խորհրդային գրող», 1989, էջ 508-509:

72 Տես Չարենցյան ընթերցումներ, Եր., Երևանի համալս. հրատ., գիր 1, 1973, էջ 209, գիր 2, 1974, էջ 107:

73 Դ. Գասպարյան, Կոչ ժողովողին. Չարենցի «Պատգամ» բանաստեղծությունը, «Ավանգարդ», Եր., 1990, հուլիսի 25, թիվ 82:

«Պատգամի» ստեղծման ժամանակային մերժությունը (վերջին հոդվածում դաւողություններ են արվում 1932 թ. Բարում ժամանած առաջին շղանավի մասին) և հայրկացին՝ մալոնանշվում է բառհմապների բառային-հնչյունական համբկնումը: **Հավաքական ուժի և հայրենիքում հավաքվելու նույնարմատ բաղադրիչները մակերեսային հայացրով կարող են թվական առաջնամասը:**

Կարծես թե այս մոլորությունն է բնկած գրականագեր Գրիգոր Հակոբյանի՝ դարձյալ խորհրդային գրաքննության շարադրված (մահացել է 1981-ին), բայց արդեն անկախության օրոք պատճենագիր հուշագրության՝ «Պատգամին» վերաբերող հայությունը: Այլ դեպքերում իմաստ հավասարի և արժեքավոր վկայություններ հաղորդող հուշագիրը, ամրարակույս, չորրորդ հայության ոչ միայն ինքն է պահում «**հայրենադարձության բարբերակը»** (««Պատգամը» աշխարհով մեկ սփոռված հայերին ծովումից փրկելու վերաբերյալ յուրօրինակ ակրոստիքու էր»⁷⁴), այլև այն հետահայաց դիմարկումով վերագրում է իրեն՝ Եղիշե Չարենցին: Իբր թե՝ Գրողների միության արուդիայում իրենց դասավանդած բանասիրեղը սաների համար վերլուծել է «Պատգամը» ժողովուրդների ծովման վկանգի տեսանկյունից: Նախ՝ 1935 թ. զարմանը զաղդմագիրը քողազերծված չէր, մինչդեռ հայրենիք վերադառնալով ազգածուումից փրկվելու կոչ կարելի է վերագրել թեկուց և բյուրմացարար, միայն գաղղմագրին, բայց ոչ բնակված «Պատգամը» տեսանելի հորիզոնական բնագրին: Որ Չարենցը կարող էր ինչ-որ մարդկանց մոտ իսունել իր նկարական գաղղմագրի ամփոփող այդ գործի մասին, բացի զաղդմագրը (ինչպես արել է Բակունցի հետ գրուցում) կամ զգուշանալով շրջանցել («Մենք զգում ենք, որ նա ինչ-որ բան է ուզում ասել, բայց չի ասում»⁷⁵, – իշխում է Գ. Հակոբյանը), հնարավոր է, անգամ հավանական: Բայց երես մարդը 1935 թ. զարմանը համոզված է, որ իր բանասիրեղությամբ ծգվել է, որ իր ժողովուրդը չծովվի ուրիշ ազգերի մեջ, և հայրենիք վերադառնալու կոչ է արել սփոռութահայությանը (որն, ի դեպք, առանց իր կոչի էլ վերադառնում էր), ինչո՞ւ մեկուկես գրադի հետո կայացած սարսափելի հարցարձնության ժամանակ չի ատում, որ դա է մկանի ունեցել: Զե՞ս որ նույնական որպես իսուսանավման միջոց՝ «**հայրենադարձության բարբերակը»** շար ավելի համոզիչ կինչեն, բան «**յեռնային շրջանների բարբերակը»**։

10.«Բազին» հանդեսի կամ Պողոս Սինալյանի տեսակետ:

1960-ական թվականներից Բեյրութում գուագրվող այս նշանավոր համարներ, համաշխին իր խմբագիր Պ. Սնապյանի, բազմից անդրադարձել է Չարենցի կյանքի և սպեղծագործության մութ անկյուններին, դրանց շարքում նաև «Պատգամի» Էուրյան հարցին: Բացառապես Չարենցի ծննդյան 80-ամյակին նվիրված համարում երկու անգամ անդրադարձ է արված «**հայրենադարձության բարբերակին»**: Չափազանց բարձր գնահատելով Ալմաստ Չարարյանի աշխատանքը՝ համարի վերջին էջում սփոռութահայ մեկնարանը իմաստ ակնարկ է ներփակում, թե՝ «Պատգամի» ծանոթագրության մեջ «զաղակարը ենթակլուած է կամաւոր այլասերման»⁷⁶:

Ավելի վաղ հայուկ անդրադարձ է արված նաև Վ. Գաբրիելյանի զույգ հրապարակումներին: Դրանց առիթով «Բազինը» «**հայրենադարձության»** դրույթը համարում է ««Պատգամ»ին ճշմարիկ խորհուրդն» շնորհ, նոր «յուացման պարտմական ու բուն պատճառները» շրջանցող տեսակելիք⁷⁷:

Իսկ ո՞րմէ է այդ ճշմարիկ խորհուրդը: Ըստ հանդեսի՝ դա հայ ժողովրդի ապագան

74 Չարենցի հետ. Յուշեն, 2008, էջ 371:

75 Նոյն տեղում, էջ 370:

76 «Բազին», Պեյրութ, 1977, N 12, էջ 132:

77 Տես նոյն տեղում, էջ 77:

ոչքե խորհրդային կարգերի կամ սոցիալիզմի, այլ սեփական ուժերի հետ կապելու հայեցողությունն է. ««Պատգամ»»ը՝ իր գրառման օրերուն համայնավարութենակ արևադապի յուսարեկ և հարազարդ ժողովուրդին միայն հաւաքացող բարապած մարդու մը իսու աղաղակն է, բանասրեղծական դաժան հնարքով մը բարագուած հեռահայեց կոչ...»»⁷⁸:

Նոյն էջի աջ սյունակում ևս մեկ անգամ բարագրիած առասպելյալ բանասրեղծությունը և երբենքի գաղղրնագիր, բայց վաղոց և այժմ ամենածանոթ, զիսարատերով ընդգծված «Ո՞վ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՇ», ԶՈ ՄԻԱԿ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԶՈ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ Է» նախադասությունը լուր հիշեցնում են ճշմարդությունը:

Այդ ճշմարտությունը վերջնավորված չէ ժամանակի մեջ և ըստ այրմ ենթակա չէ ավարտուն լեզվական սահմանման: Վերոբերյալ մեկ տասնյակ տեսակետների քննական վերլուծությունից զատ՝ կան ասույթի ափորիստիկ-իմաստասիրական խորքին մոտեցնող ևս մի քանի վերլուծական դիտանկյուններ:

Դրանցից մեկը ասույթի լեզվական՝ բառային ու ոճական ներքին պարունակության բնութագրումն է: Խիստ ընդհանուր գծերով պատկերն այսպիսին է: Ասույթը ձևով, բովանդակությամբ և հասցեագրումով կոչ է: Այն արտահայտում է միախառնված դժգոհություն և պահանջ, որոնց ցուցիչը բազմանշանակ «Ո՞վ» կոչական եղանակավորիչն է⁷⁹: Հորդորի եղանակ ունեցող կոչը ուղղված է ամբողջ հայ ժողովրդին, այսինքն՝ ազգի հավաքականությանը, և այս ընդհանրությունը բացառում է նպատակի իրականացումը եզակի խմբի, կուսակցության, դասակարգի կամ անհատի ուժերով⁸⁰: Երկու անգամ կրկնված «քո» բառածերը («քո միակ փրկությունը քո») կրկնապատկում է ժողովրդի ներնուրույնության, հույսը երեք առանձին կամ օտար ուժի վրա չնելու անհրաժեշտությունը: «Պատգամի» հավասարազոր բառերի շարքում ծանր կշիռ ունի հատկապես «միակ» բառը, որ այլնուրանքի գերծումն է, փրկություն երեք օտարի, ուրիշի հետ չկապելու, հույսը միայն իր վրա դնելու բարոյականը: Պատգամյան բառաշարքի զիսավոր հանգույցը, սակայն, «փրկություն» բառապատկերն է. ստուգապես այն շատ ավելին է, քան բառարանային իմաստը և անգամ սովորական գեղարվեստական նշանակությունը: Ըստ այդ բառի՝ ազգը պետք է փրկվի քաղաքական, ազգային, մշակութային, տնտեսական և հոգեբանական ճնշումից: **Մի կողմից՝** դա նշանակում է, որ ազգը գերության մեջ է, բառ-զաղափար, որ չկա ափորիզմը ներփակող նախադասության մեջ, բայց հզոր ճնշով զգացվում է ենթատեքստում (ի դեպ, «գերության» բառը երկու անգամ օգտագործված է «Պատգամի» հորիզոնական բնագրում)⁸¹: **Մյուս կողմից՝** ներմուծվում է մեսիայի՝ փրկչա-

78 Նոյն տեղում:

79 Նայ բանաստեղծներից այս բառը ամենցից հաճախ օգտագործել է Պատշաճար Դպիրը, ընդ որում հենց բանաստեղծության սկզբուն: «Ով նեղելոց միշիբարիշ» բառերով է սկզբուն գինուն ուղղված կոչը, «Ով դու մանուկ դեռահասակ» տողով՝ մի պատանու հոված խրտական հորդորը: «Ով միություն զարմանալի» սկսվածքը բանաստեղծությունը կոչ-դիմումով փառաբանում է միհանության գաղափարը, իսկ «Ով համայնց փափագեի» տողով սկսվող տաղը արտահայտում է կոչ-դժգոհություն, որի հասցեատերը գաղտնագրված է «ՈՍԿԻԻ» ակրոստիքոսով. բանաստեղծությունը վերնագրված է «Առ այն, զոր գլխատաքր ցուցանեն»: Տես Պատշաճար Դպիր, Տաղկմեր, Եր., «Սովետական գորո», 1985, էջ 58-59, 98-100, 103-104:

80 Ազգի անբողջությանը դիմելու, նրա հետ դու-ով խոսելու այս ձեզ ցայսուն կիրառություն ունի «Գիրք ճանապարհի» զիսավոր հերոսներից մեկի՝ «Պատգամի» զաղափարախոսությունը մեծապես հասունացրած Խ. Արքվանի վեպում. «Յայոց ազգ, Յայոց ազգ, ծեր ջանին մեռմիմ, Յայոց ազգ, քո հողին նասաղող...»: Տես Խ. Արքվան, Երկեր, Եր., «Սովետական գորո», 1984, էջ 71:

81 Տասնամյակներ հետո նոյն Գլավիտը հակառական տրամադրություններ տեսավ նաև Պարույր Անակի «Եղիշի լուսի» հետևյալ տողերում.

կան առաքելության կրողի գաղափարը, ընդ որում փրկչի դերում կարծես թե մարզարե բանաստեղծն է, բայց իրականում մտքի մոգական բոլշըռվ Զարենցը փրկչի դերում դնում է հենց իրեն՝ փրկվողին: Իսկ դա հնարավոր է միայն «հավաքական ուժի» միջոցով: **Հավաքականությունը միաբանումն ու համախմբումն է ժողովրդի բոլոր բաղադրիչների և տարրերի՝ Հայրենիք և Սփյուռք, ղեկավարներ և ստորադասներ, մտավորականներ և շինականներ, հող և նրա վրա ապրող մարդիկ, անցյալի արժեքներ և ներկայի արարում:** Այդ ամենի շնորհիվ էլ տիրական կլինի ազգի ուժը՝ ներառելով հզոր տնտեսությունը, ծաղկող գիտությունն ու արվեստը, բարեկեցիկ և արդար հասարակությունը, ռազմական զորությունը: Այդ ամենի՝ «հավաքական ուժի» և «ուժի հավաքականության» շնորհիվ հայ ժողովուրդը կփրկվի որևէ այլ ազգի գերին կամ հպատակը լինելու պարտադրանքից:

Ուղղահայաց պատգամի լայնակուն վերլուծության մյուս դիտանկյունը ասույթի պատմագեղարվեստական բովանդակության զուգադրումն է «Գիրք ճանապարհի» ժողովածուի մյուս գործերի հետ: Դրանցից յուրաքանչյուրը մեծապես կամ փոքր չափով նպաստել է «Պատգամի» հասունացմանը, որը կարճ ժամանակում ստեղծված այդ գրքի այսպես ասած՝ «Վերջին շրջանի» արտահայտությունն է: Բայց միաժամանակ՝ այդ ստեղծագործությունները նաև լուսավորվել են «Պատգամի» մտքի լույսով: Այս ամենը հիմնավորելու և ընդհանրապես՝ չարենցյան «Պատգամի» ճանաշորությունն ամբողջացնելու համար հարկ է վերլուծության ոլորտ բերել նաև բանաստեղծության երևացող բնագիրը, այսպես կոչված՝ **հորիզոնական «Պատգամը»**:

6. Հորիզոնական պատգամի առեղծվածը. այլ առեղծվածներ և լեզենդներ

Գրականության տեսության մեջ վերապահ, անգամ քամահրական մոտեցում կա ընդհանրապես ակրոստիքոսի և հատկապես՝ մեզոստիքոսի նկատմամբ: Ըստ այդմ՝ նման գործերը ուղղված են ավելի շատ տեսողությանը, քան լսողությանը: Նրանցում էականը իրբն թե՝ հենց զրաֆիկական պատկերն է, ոչ թե խոսքը, իսկ հնարանքն ինքը գրչի խաղ է կամ կատակ, որին տեղ տված գրվածքը չունի գեղարվեստական ինքնուրույն արժեք: Այս տեսակետի առավել կտրուկ տարրերակը արտահայտվել է Ա. Կվյատկովսկու նշանավոր բանահանում. «Մեսոստիքոսի, հավասարապես նաև տաղաշափության արտակարգ դժվար նման ուրիշ ձևերի մասին կարելի է ասել հին լատինական ասացվածքի բառերը. «*Stultum est diffici habere nugas*» (*«Հիմնարություն է դժվարին անմտությանք գրառվելը»*)»⁸²:

Զարենցի «Պատգամի» մասին նույնապես հայտնվել են նման կարծիքներ: Առավել տարածված է, սակայն, անտեսումը. չարենցագիտական աշխատությունների բացարձակ մեծամասնության մեջ այս բանաստեղծությունն ընդհանրապես շրջանցվում է կամ լավագույն դեպքում դիպվածային անդրադարձ է արվում սուսկ նրա ուղղահայացին: Միայն առանձին դեպքերում հորիզոնական

—Իսկ որտե՞ղ է մեր փրկությունը:
—Մեր,
Եվ, ավա՞ղ, ոչ մեր ծուռերում...

82 Квятковский А. П., Поэтический словарь, с. 155.

բնագիրը նույնպես արժանացել է որոշ ուշադրության, այն էլ հակառակ ծայրահեղությամբ՝ հայրենադարձության կոչի դիրքերից և այն չփաստարկված մոտեցմամբ, թե իր՝ արժեքային և բովանդակային առումներով այն հավասարազոր է ուղղահայաց գաղտնագրին:

Իրականում հորիզոնական «Պատգամը» ուղղահայացի բնագրային նախապատրաստումն ու գգուչավոր հուշումն է, որը գոնե այդքանով է արժանի հատուկ ուշադրության: Մանավանդ որ, ժանրատեսակի յուրահատկության և գրվածքի առանձնահատող ճակատագրի թելադրանքով նա մնացել է գերհզոր գաղտնագրի «ստվերում»՝ այն աստիճան, որ ընթերցողներից շատերը, Զարենցի որևէ հատորում կամ թերթում հանդիպելով «Պատգամին», կարորում են «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» ասույթը, իսկ բուն բնաստեղծությունը՝ ոչ: Որոշ չափով բազմաբառ կամ ձգձգված, ինչ-որ իմաստով՝ սպասարկու-հարմարեցված դեր կատարող հորիզոնական «Պատգամի» նկատմամբ մեղք գործած չլինելու համար (չէ՞ որ, ի վերջո, նա է իր «տաքուկ» մի անկյունում պահել-պահպանել սրբության կարգը դասված գաղտնագիրը) պետք է տաճք նրա գրական-պատմական, իմաստային, ոճական ու տաղաչափական բնութագիրը: Վերջինս հարկ է սկսել բնագրի ուշադիր զննությունից, որի որոշ նախադրյալներ կներկայացնենք իման՝ իրեն գալիք ավարտուն հետազոտությունների ներածական:

«Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» աֆորիզմը բաղկացած է քառասունվեց տասից, իսկ բանաստեղծության տողաքանակը մեկով ավելի է՝ քառասունյոր: 23-րդ տողը՝ «Որ գերության անհաղորդ...», դուրս է մեզոստիքոսից և խախտում է այն: Խախտումը առկա է «Գիրը ճանապարհի» առաջին հրատարակության մեջ և կրկնվել է բանաստեղծության հետագա բոլոր հրապարակումներում՝ բացի մեկից: Տողը լրելյան օտարվել է «Բագին» հանդեսի վերոհիշյալ հրապարակման մեջ: Ավելորդ տողի առկայության պատճառն անհայտ է: Միզուցել ինչ-որ պահի Զարենցը կամեցել է երկու առանձին տողերից ստանալ «ու» տասի երկու մասնիկները (խախտումը նախորդում է մեզոստիքոսի «փրկությունը» բառի առաջին «ու»-ին), ինչպես ակրոստիքու կազմելիս վարդում էին միջնադարի մեր որոշ բանաստեղծներ, բայց դա նրան չի հաջողվել, ուստիև սպարել է ավելորդ տողը: Չի բացառվում նաև խմբագրական միջամտության կամ մեկ այլ գործոնի հավանականությունը:

Համենայն դեպս, դուրս մնացած տողի մեկնարարանությունը ինչ-որ չափով կարող է նպաստել բանաստեղծության ամբողջական պարզաբանմանը:

Շնկատված մյուս հետաքրքրական իրողությունն այն է, որ մեզոստիքոսի և «Պատգամի» մնացյալ բնագրի միջև ոչ մի ընդհանուր բառ չկա: Բացառություն է թվում «ու»-ը, բայց իրականում առկա են համանուն երկու տարրեր բառեր՝ հորիզոնական բնագրում՝ հարցական դերանունը («Ո՞վ այդ արևը թերեց»), իսկ ուղղահայացում՝ կոչական բառը («Ո՞վ հայ ժողովուրդ»): Բառապաշարային նման անցրպեսում, որ կարող է բացատրվել ծածկագիրը չգաղտնագերծելու հեղինակի մտահոգությամբ կամ մեկ այլ գործոնով, ամեն պարագայում ուժգնացրել է ուղղահայացի և հորիզոնականի խզումը:

Բայց և այնպես, բանաստեղծության արտաքնապես լավատեսական, բվացյալ «ստվետական ոգուն» առընթեր ուշադրություն է գրավում բնագրում կրկնվող մի բանի բառերի սերտությունը ավելի շատ մեզոստիքոսի, բան չծածկագրված

մեծ քնագրի հետ: Այդ բառերն են՝ «գերություն», «հիմարություն», «իմաստություն»: Դրանցից առաջինն առկա է նաև շղթան խախտող տողում:

Այդ տողից մի քանի տող առաջ՝ դարձյալ տխուր-ոչ սովետական իմաստ ունեցող 20-րդ տողի վերջում, առկա է սխալ գրությամբ բառ՝ «խավարտչին» (հայերենի բառարաններում առկա է «խավարչտին» ձևով): Տողը այս գրությամբ է տպագրվել և՝ «Գիրք ճանապարհի» ժողովածուի առաջին հրատարակության մեջ, և հետագա հրապարակումների մեջ մասում, այդ բվում՝ Զարենցի Երկերի ակադեմիական հրատարակության չորրորդ հատորում: Եղածը վրիփա՞կ է, թե՞ Զարենցի ամենախույզ միտքը նկատի ունի մի բան, որ մեզ տեսանելի չէ: Եթե սուկական վրիփակ է, պետք է ուրդիշ ապագա պատասխանատու հրատարակություններում:

Հետաքրքրական, երբեմն տարօրինակ քնագրային տվյալների կողքին ուշադրություն են հայցում բառապաշարային և պատկերային մի ամբողջ շարք այլ իրողություններ, որոնց կողքով անտարբեր անցել է Նորին մեծություն չարենցագիտությունը: Դրանց թվում են արխայիկ և հազվադեպ արվեստավոր բառերը («պուրապուրե», «հեց», «զվարքուն», «լուրք», «անկոր»), զնոցն և իմաստակիր հանգերը («մարդուն-զվարքուն», «հորդ-անհաղորդ», «արև Էլ-արևե», «հիմաանմահ»), ճարտասանական հարցումներն ու բացականչությունները, բառերի պատկերային անսովոր կապակցությունները: Վերջին կարգի միավորները նոյնապես գրեթե չեն արժանացել ուշադրության, եթե չհաշվենք «նոր լոյսը» անվերապահորեն խորհրդային կարգերի այլաբանություն համարելու կաղապարը կամ դիմապահային որոշ դատողություններ, ըստ որոնցից մեկի, ասենք, «իմաստության մի գետակ» ասելով՝ Զարենցը նկատի ունի «Սասնա ծուեր» էպոսը:

Զարենցագիտությունը կոչված է ոչ միայն մեկնարաններու հորիզոնական պատգամների էությունն ու ոճաբանությունը, այլև լուծելու վաղուց հայտնի, բայց այդպես էլ պատասխան չստացած մի քանի հարցեր, որոնցից ծանրագույնն ու գայթակության աստիճանի հետաքրքրականը մատնիշի առեղծվածն է: Արդեն բանի տասնամյակ գրական միտքը տաճջվում է և չի կարողանում հիմնավոր պատասխան գտնել այն հարցին, թե գրաքննությանը այնքան վարպետորեն խարած Զարենցը ո՞ր «բարեկամին» (կամ «բարեկամներին») է անզգուշորեն, գուցե և դիտավորյալ հայտնել նվիրական գաղտնիքը, և թե նրանցից ո՞վ է այդ տեղեկությունը փոխանցել գաղտնի ոստիկանությանը: Բանավոր և գրավոր աղբյուրներում դեռ 1930-ական թվականներից անհատապես շրջանառում են Զարենցի երկու մտերիմների՝ արձակագիր Ակսել Բակունցի և գրաքննադատ Սուրեն Հարությունյանի անունները: 1936 թ. նոյեմբերի 16-ի արդեն հանրահայտ հարցաքննության ժամանակ Մուղրուսի-Գևորգով երկյալի և Զարենցի միջև առանց մեկնարանության կայացել է հետևյալ երկխոսությունը.

«Հարց. Ո՞վ զիտեր այդ հակահեղափոխական լոգունգի մասին:

Պատասխան. Ես ինքս ցույց եմ տվել և այդ լոգունգը կարդացել միայն երկու մարդու Ա. Բակունցին և գրական քննադատ Ս. Հարությունյանին»⁸³:

Թե երկուսից հատկապես ո՞վ է իրագելիչը, չեն ասում ո՞չ քննիչները, ո՞չ բանաստեղծը: Սակայն այս բացահայտումից շատ չանցած՝ Զարենցը դարձյալ ծանր, բայց արդեն մտերմիկ գրույցի ընթացքում իր (նաև Բակունցի) ավագ բարեկամ Ավետիք Իսահակյանին միանշանակ ասել է, որ իրեն մատնել է Ակսել

83 Եղիշե Զարենց, Նորահայտ էջեր, էջ 372:

Բակունցը. «Նա գրել է մի ոտանավոր, որի մասին դուք գիտեք, և ասում եք, որ այդ մասին ինքը միայն Ակսելին է ասել, և Ակսել էլ իրեն դավաճանել է... Նա ասում է, որ ես միայն Ակսել Բակունցին եմ ասել, և երբ, ասում է Չարենցը, երբ Պետրաղ-վարչությունը ինձ հարցրել է այդ մասին, ես անմիջապես ասել եմ, որ դա Ակսել Բակունցն է իրենց ասել, որովհետև ես ոչ մեկի այդ մասին ոչինչ չեմ ասել»⁸⁴:

Հակասությունն առկա է արդեն իսկ Չարենցի խոսքում: Քննիչներին տված երկու անուններից մեկը շուտով «անհետանում է» Խսահակյանի հետ ունեցած զրոյցում: Չարմանալի չէ, ուրեմն, հակասական այն պատկերը, որ ուրվագծում է մատնիշի հայտնաբերմանը կոչված գրական դատումներում: Չնորանալով, որ սկզբնաղբյուրի նշանակությունը ունեցող չարենցյան հիշյալ վկայություններն ամփոփող երկու փաստարդերն անհայտության մեջ էին և հրապարակվել են միայն 1990-ական թթ., նշենք հետևյալ մեծ հակասությունը: 1930-1940-ականների սփյուռքյան որոշ հրապարակումներում միանշանակորեն մեղավոր է համարվում Ակսել Բակունցը: Մինչետք դարձյալ Սփյուռքի ուրիշ մեկնաբաններ Բակունցին «փրկելու» կամ որևէ մեկին մեղադրյալ համարելու բավարար հիմքեր չունենալու դրդապատճառներով մեջտեղ են բերում անանուն «մի բարեկամի» լեգենդը, գրպատ և մի ընթացք անտիպ մնալուց հետո անշախության օրոք տպագրվում են հուշեր, որոնց հեղինակները (Հմայակ Սիրաս, Վարագ Առաքելյան) անվերապահորեն լրտես և մատնիչ են հոչակում բացառապես Սուրեն Հարությունյանին:

Եվ ոչ որի մնորդվ չի անցնում զաղտնագերծման մեղավոր հայտարարել հենց իրեն՝ **Եղիշե Չարենցին**: Քաջ իմանալով, որ իր բոլոր մնորդերը բառացի մեջքերում ներկով պատմվում են ՆԳԺԿ-ի պատասխանատուններին (այդպես էր ամենաուշը՝ 1935 թ. սկզբից), Չարենցը կարծես թե մեկից ավելի մարդու է ցոյց տվել և կարդացել այն, ինչ մեծ զգուշությամբ ու խնամքով բացցրել էր բանատողերի մեջ: Բայց այս պահին ծագում է ամենադաժան հարցը. իսկ ի՞նչ կպատահեր, եթե Չարենցը լիներ ողջախոհ, ծածկամիտ ու հավասարակշռված և **ոչ մեկի չհայտներ** իր մեծ զաղտնիքը: **Սարսափելի է մտածելն անգամ, որ այդ դեպքում հայ ժողովուրդը այդպես էլ երբեք չէր իմանա իրեն վերաբերող, իրեն հղված մեծագույն իմաստնությունը**: Համաշխարհային գրականության պատմությանը հայտնի են ցնցող դեպքեր, երբ մի բանաստեղծի սրբորեն ծածկագրված մեզոստիքոսի մասին իմացվել է միայն մի բանի սերմոնի հետո:

«Պատգամի» ամբողջ պատմությունը ինքնին չափազանց նման է լեգենդի: Բայց կան նաև Չարենցի «Պատգամը» շրջապատող մուր պատմություններ, որոնք իսկապես լեզենդներ են, **մեզոստիքոսի լեզենդները**:

Համաձայն մի լեզենդի՝ աշխարհում եղել է գոնե մեկ գրականագետ, ով կամեցել է առանձին և մանրաբնին հետազոտության ենթարկել «Պատգամը»: 1969 թվականին հայկական թերթերից մեկը ազդարարում էր, որ ընթերցողը հաշորդ համարում կարող է կարդալ այդ «հոյակապ վերլուծականը»: Բայց մեկ շարար անց լույս տեսած այդ համարում խմբագիրը ցավ էր հայտնում, թե դժբախտարար հնարավոր չեղավ զտնել բաղմակի հողվածը: Կորած, միզուցե և բնավ չգրված այդ առեղծվածային նյութի հեղինակն է նույն ինքը՝ Չարենցին հայտնաբերած կամ նրան նոր կյանք տված **Նիկոլ Ալբայանը**:

Երկրորդ լեզենդը. ինչպես և առաջինը, իրականության արձագանքն է: Համաձայն այդ պատմության՝ «Պատգամի» զաղտնագրի մասին անձնական իրազեկի-

84 Չարենցապատում ըստ անտիպ վավերագրերի, էջ 97, 99:

չից իմացել է անձամբ Լավրենտի Բերիան, այն էլ՝ բանաստեղծի նկատմամբ քրեական մեղադրանք հարուցելուց և ասույթի հանրայնացումից մեկուկես տարի առաջ՝ 1935 թ. մայիսին: Նույն օրն էլ նա ընդունել է Զարենցին, որը արյունար-բուից մազապուրծ՝ հենց Թիֆլիսի մի սրճարանում գրել է Բերիային փառաքանոյ մի ներքող՝ հավանաքար իր մեծ գաղտնիքի հանդեպ դրսերած ներողամտությանն ի պատասխան: Պարզապես աներևակայելի է, բայց ըստ այդ բանավոր պատում-լեզենդի՝ մեկ տարի հետո նոյն առանձնասենյակում Աղասի Խանջյանին զննակահարած Բերիան մեկուկես տարի անտեսել է փաստացի նաև իր դեմ ուղղված գաղտնագիրը, իսկ սարսափահար Զարենցը գրելուց անմիջապես հետո ուրիշի ներկայությամբ պատառութելով ոչնչացրել է ներքողը:

Երրորդ լեզենդը հորինածու արձագանքն է խիստ իրական այն հարցի, թե խորիրդային ահեղ ու ամենատես գրաքննության հայլական մասնաճյուղը, որ «Գիրք ճանապարհի» ժողովածուի մեջ հայտնաբերել էր երեք հակապետական գործ, ինչպես չէր նկատել ամենից վտանգավոր այդ գրվածքը: Եթե հավատանք հուշագրությամբ միշտորդավորված վկայություններին, նրանք այնուամենայնիվ ունեցել են նման անորոշ մի կասկած, որի մասին շատ տարիներ անց գգուշորեն պատմել է այդ շրջանի հայլական Գլավիտի պետ, հետազայում տասնինգ տարի աքսորում տառապած Գառնիկ Ղազարյանը (ի դեպ, «Պատգամի» գաղտնագերծմանը այս կամ այն կերպ առնչված, բանաստեղծին դրա համար տանջած գրեթե բոլոր պաշտոնյաները՝ Ինգուլվը, Ամատունին, Բերիան, Մուղրուսին, Գևորգովը, ճակատագրի հեգենանորվ կամ պատժի ինչ-որ դիվային տրամարանությամբ զնդակահարվել են): Բայց իրական բացահայտումը իբրև թե արել է Մուղրուսին՝ նույն ինքը՝ Խաչիկ Աստվածատուրովը: Եթր հարցաքննության ժամանակ նա Զարենցին հայտնել է, որ գաղտնագիրը գաղտնագերծված է, բանաստեղծը անկեղծորեն հետաքրքրվել է, թե ո՞վ է բացահայտել գաղտնիքը: Այդ ժամանակ Մուղրուսին պարծեցել է, թե անձամբ ինքն է նկատել բաքրյածը:

Լեզենդը պատմում է, որ Մուղրուսու սուտը բռնելու կամ նրա ասածի խկության մեջ համոզվելու համար Զարենցը հենց տեղում գրել է մեկ ուրիշ բանաստեղծություն և Մուղրուսու առաջարկել գտնել նաև դրա գաղտնագիրը: Եթր շատ շարշարվելուց հետո քննիչը չի գտել բանալին, Զարենցն ինքը ցույց է տվել բանաստեղծության ոչ երկրորդ, բայց դարձյալ մեջտեղի տառերով կապակցված ծածկագրի ասույթը. «**Մուղրուսի, դու երկոտանի էշ ես, ճիշտ եմ ասում**»:

Ամեն մի հորինվածքի մեջ կա ճշմարտության գոնեն մի փոքրիկ հատիկ: Գրական բանահյուսության մի յուրօրինակ տեսակ հիշեցնող այս պատումի մեջ ճշմարտանման տարրերը մեկից ավելի են, բայց մեզ գրադեցնող հարցի տեսանկյունից ամենացնցողն այն է, որ «Պատգամի» շարժառիթով գրված, ըստ ամենայնի՝ «Պատգամին» առնչվող երևակայական բանաստեղծությունը նույնպես մեզուսիքն է:

Իսկ գիտական նշանակության տեսակետից առավել էականը հետևյալն է: Եթե անզամ թերահավաստորեն ընդունենք մեզոստիքոսի լեզենդներում գետեղված վկայությունների թեկուզի ինչ-ինչ տարրերի հավաստիությունը, կարելի է ենթադրել, որ մոտ կամ հեռավոր ապագայում կարող են հայտնաբերվել չարենցյան ժառանգությունը և «Պատգամ» բանաստեղծության պատմությունն ամբողջացնելու կոչված ևս երեք անտիպ և կորուսյալ գործերը.

1.Նիկոլ Աղբալյանի ուսումնասիրությունը Ե. Զարենցի «Պատգամի» մասին,

- 2.Եղիշե Չարենցի ձու-ներբողը՝ նվիրված Բերիային,
 - 3.Եղիշե Չարենցի երգիծական մեզոստիքոսը Մուղդուսու մասին:
- Այդ ստեղծագործությունների բնագործը առայժմ անհայտության մեջ էն:

Summary

THE “PRECEPT” OF YEGHISHE CHARENTS AS MESOSTIC

The mystery in the saying: “O Armenian people, your one and only salvation is concealed in your collective strength”.

Seyran Z. Grigoryan

In 1933 Yeghishe Charents wrote and placed the poem “Precept” (“Patgam”) in his collection of poems “Book of the Way”, by each line’s second letter of which was formed the secret saying “O Armenian people, your one and only salvation is concealed in your collective strength”. For many decades it was considered to be an acrostic. It is shown in the article that it is a mesostic, because it is formed not with the first letters but with the middle of the line (second letters). This hypothesis has its grounds in the world literature, especially in the analysis of mesostics in the works of the 20th century’s Russian writers. There can be found even some convergences between the poem of Charents “Precept” and Edgar Allan Poe’s “An Enigma”. Charents renewed the tradition of acrostic, which was quite extended in the middle age Armenian poetry, but forgotten in modern times. He devoted some acrostics to her daughter Arpenik Charents, which are also placed in the collection of works “Book of the Way” and have tight connections with the poem “Precept”. Beside the artistic values of Charents’ mesostic, his national ideology and creative destiny also have important significance and their several undiscovered aspects are discussed in the following article.